Շաբաթ
11 հունվարի 2025թ.
№ 2 (632)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հարգանք ձեզ՝ ձեր եղերական տառապանքի ու նահիրական ոգու համար

Երկրորդ անգամ Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը Նոր տարին և Սուրբ Ծնունդն անց կացրեց թշնամական երկրի զնդաններում՝ կեղծ մեղադրանքներով:

Ադրբեջանը և Թուրքիան չեն պատրաստվում հանդուրժել Հայաստանի Հանրապետության գոյությունը, իսկ մենք շարունակում ենք թաղված մնալ ճղճիմ խոսակցությունների և մեռելածին օրակարգերի մեջ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 2025 թ. հունվարի 7-ին հարցազրույց է տվել տեղական հեռուստաընկերություններին: Նա անդրադարձել է նաև «Զանգեզուրի միջանցքին»: Ալիևի խոսքով՝ ««Զանգեզուրի միջանցքը» պետք է բաց լինի, և այն բաց կլինի»:

«**Մենք խաղաղություն և համագործակցություն ենք ուզում Հարավային Կովկասում, և թող մեզ չխանգարեն: Նրանք չպետք է աշխարհագրական պատնեշ ստեղծեն Թուրքիայի և Ադրբեջանի միջև: ««Զանգեզուրի միջանցքը» պետք է բաց լինի, և այն բաց կլինի: Ինչքան շուտ հասկանան դա, այնքան լավ»**,– հավելել է Ադրբեջանի ղեկավարը:

Ըստ նրա՝ Հայաստանն իրականում սպառնալիքի աղբյուր է տարածաշրջանի համար: Ալիևն ասել է, թե Հայաստանը մոտ 30 տարի ղեկավարել են ֆաշիստական գաղափարախոսության կրողները:

«Ուստի ֆաշիզմը պետք է ոչնչացվի: Այն կկործանի կամ Հայաստանի ղեկավարությունը, կամ մենք: Մենք այլ ելք չունենք»,– հայտարարել է Իլհամ Ալիևը:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ՁԼՄ-ների տված հացրազրույցի ընթացքում ասել է, որ Հայաստան առաքված զենքերը պետք է վերադարձվեն:



Ալիևը հայտարարել է, որ Ֆրանսիան և Հայաստանին զենք մատակարարող մյուս երկրները «պետք է չեղյալ համարեն այդ պայմանագրերը»՝ պնդելով՝ «Հայաստանը պետք է անհապաղ դադարեցնի զինվելը»:

«Հուսով եմ, որ խաղաղ պայմանագրի հետ կապված մեր բոլոր պայմանները կընդունվեն, քանի որ դրանցում ոչ մի արտառոց բան չկա»,– ասել է նա:

Շարունակությունը՝ էջ 9

Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամից

Սիրելիներ, աշխարհաքաղաքական ներկա բարդ իրադրության մեջ ծանր փորձությունների ենթարկվեց մեր ժողովուրդը՝ բռնազավթվեց և հայաթափվեց Արցախը, գրավված են մնում Հայաստանի ինքնիշխան տարածքներ, տակավին գերության մեջ են և անհայտ կորած մեր բազում զավակներ, Ադրբեջանի կողմից շարունակում են հնչեցվել նորանոր պահանջներ ու սպառնալիքներ: Այսօր մեր երկիրը խռովահույզ է ներքին խնդիրներով՝ կեղծիք, անօրինականություն, չարակամություն, քինախնդրություն, արատավոր երևույթներ, որոնք հասարակության մեջ պատճառ են դառնում անվստահության, անտարբերության, թշնամանքի ու պառակտումի և հանգեցնում ազգի տկարացման: Այս ամենին զուգընթաց քրիստոնեական բարոյական ընկալումների և ազգային-հոգևոր ավանդական արժեքների խեղաթյուրումը աղճատում է մեր ժողովրդի ինքնության դիմագիծը, թուլացնում ազգային ոգին, ներքաշում դեպի մեղքի, հուսահատության որոգայթներ: Սուրբ Ծննդյան խորհրդով մեզ վերստին երկնային հրավերն է ուղղվում՝ ընթանալու սիրո, հաշտության, արդարության տերունավանդ ճանապարհով: Այս կոչը իրագործելի է միայն քրիստոնեական կենսակերպով: Այս կոչը իրագործելի է, եթե անձնական բարեկեցությանն ու հարմարավետությանը չզոհաբերենք մեր ինքնությունը, ժողովրդի անվտանգությունն ու հայրենիքի բարօրությունը: Չենք կարող ծառայել համընդհանուր բարիքին՝ տրվելով փառասիրությանն ու իշխանատենչությանը և առաջնայնություն տալով սեփական շահերին: Մենք՝ որպես ազգ, լինի հայրենիքում, թե սփյուռքում, կհաջողենք, եթե միշտ հավատարիմ մնանք Քրիստոսին, Նրա վարդապետությանը, ընթանանք Աստծո Խոսքի և աստվածային կամքի համաձայն, ձերբազատվենք մոլորեցնող ու բաժանարար մարդկային նենգամտությունից: Միաբանվենք հանուն մեր պետության անսասանության և անվտանգության, Արցախից բռնի տեղահանված մեր քույրերի ու եղբայրների նկատմամբ արդարության վերականգնման, հանուն մեր ազգի ու հայրենիքի ապահով և բարօր հարատևության: Լինենք միմյանց գործակից և ոչ՝ հակառակորդ, լինենք նախանձախնդիր ծառայելու և ոչ՝ դիրքն ու հանգամանքը չարաշահելու մեջ: Տարագիր չդառնանք մեր երկրից, ապրենք ու արարենք մեր հարազատ բնօրրանում: Երեխաների նոր ծնունդով, արժանավոր զավակների դաստիարակությամբ հզորացնենք մեր ազգն ու հայրենիքը: Յուրաքանչյուրս մեր կարողության չափով ներդրում բերենք համազգային կյանքի առաջընթացին՝ ի պայծառություն մեր պետության և ի շահ մեր ժողովրդի լուսավոր գալիքի: //

Լուրեր «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունից

■ ԶՊՄԿ-ն ներկայացրեց իր կայուն զարգացման հերթական, անընդմեջ 3-րդ հաշվետվությունը, որն ամփոփում է 2023 թվականի գործունեությունը, ընդգրկում է 2024թ. որոշ տվյալներ, ինչպես նաև տեղեկատվություն՝ առաջիկա տարիների թիրախների և անելիքների վերաբերյալ:

Ներկայացվեցին նաև սոցիոլոգիական հարցումների, սոցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունքներ:

Հայաստանի Հանրապետությունում հարցվածների մեծամասնությունը՝ 77%-ը, կարծում է, որ կարելի է ունենալ միաժամանակ և՛ հանքարդյունաբերություն, և՛ մաքուր բնություն ու զարգացած տնտեսություն:

Սյունիքի մարզում հարցվածների մեծամասնությունը՝ 69.8%-ը նույնպես այդ կարծիքին են, ընդ որում՝ այս միտքը հիմնականում ընդունելի են համարել 31-45 տարեկան, բարձրագույն կրթություն ունեցող, քաղաքաբնակ հարցվողները:

Սոցիալ-տնտեսական վերլուծության համաձայն՝ Հայաստանի արդյունաբերության ավելի քան մեկ քառորդը հիմնված է հանքագործության վրա: Սյունիքը, որտեղ գործում է ԶՊՄԿ-ն՝ ամենախոշոր հանքարդյունաբերական ընկերությունը, Հայաստանի ամենահարուստ մարզն է, որն իր փոքր բնակչությամբ ապահովում է մեծ տնտեսական արդյունք:

Աղքատության միջին ցուցանիշը հանրապետության մասշտաբով կազմում է 23%, դա այն դեպքում, որ ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Շիրակի մարզում՝ 43,1%, իսկ Սյունիքի մարզի աղքատության ցուցանիշն ամենացածրն է՝ 7%:

■ 2024 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտք է գործել 107 միլիարդ դրամ:

Այս մասին կառավարության հերթական նիստի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետի խոսքով՝ այս գումարը ներառում է ինչպես կոմբինատի կողմից վճարված հարկերը, որոնք կազմել են 73 միլիարդ 800 միլիոն դրամ, այնպես էլ 33 միլիարդ 249 միլիոն դրամ շահաբաժինը, որը պետական բյուջե է փոխանցվել նախորդ շաբաթ:

«Սա, կարծում եմ, մի իրադարձություն է, որ արժի ընդգծել, որովհետև, ըստ էության, նման բան ավելի քան 20 տարի տեղի չի ունեցել Հայաստանի Հանրապետությունում»,– ասաց վարչապետը:

Փաշինյանը նաև նշեց, որ այն պահից, երբ կառավարությունը բաժնեմաս ձեռք բերեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, հարկային մուտքերի դրական դինամիկա է նկատվում՝ նաև հաշվի առնելով միջազգային գները և վաճառքի ծավալները:

■ ԶՊՄԿ-ն 2024 թ. շուրջ 117 մլն դրամ է տրամադրել մարզի բուժհաստատություններին: Կոմբինատի ֆինանսական աջակցության շնորհիվ բժշկական կենտրոնները կարողանում են հրավիրել մասնագետներ, վճարել ջեռուցման ծախսերը, կատարել վերակառուցման և վերազինման աշխատանքներ:

//

Կապանի կոմբինատն ամփոփել է տարվա երկրաբանական արդյունքները

«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» և «Լիճքվազ» ՓԲ ընկերությունների գլխավոր տնօրեն Սասուն Ավետիսյանը 2024 թվականի դեկտեմբերի 14-ին ընդլայնված քննարկում իրականացրեց ընկերությունների երկրաբանական ծառայությունների աշխատակիցների հետ: Հանդիպմանը նախնական ամփոփվեցին ծառայությունների կատարած աշխատանքի արդյունքները, նախանշվեցին 2025 թվականի ռազմավարական նշանակության առաջնահերթություններն ու ուղղությունները: Ընդգծվեց, որ պաշարների մասին տեղեկությունների հավաստիությունն ու տեղեկատվության օպերատիվ ապահովումն ընկերությունների երկարաժամկետ հեռանկարում կայուն և կանխատեսելի գործառնության ապահովման համար կենսական նշանակություն ունի:

Տարվա արդյունքներով լավ ցուցանիշներ գրանցած աշխատողներին հանձնվեցին ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 90-ամյակի առթիվ թողարկված հուշամեդալներ, որոնք ընկերությունները ձեռք են բերել ֆակուլտետի 90-ամյակի շրջանակներում կազմակերպված խորհրդանշական-բարեգործական վաճառքի ժամանակ. հուշամեդալների իրացումից հասույթը՝ որպես կրթաթոշակ, ուղղվելու է ֆակուլտետի ուսանողների ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմության խրախուսմանը:

//

Տարեմուտի մաղթանք Սյունյաց աշխարհին կամ ակնկալիքներ 2025-ից

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սիրելի հայրենակիցներ

■ Ազատագրված տեսնենք Սյունիքի բռնազավթված տարածքները, վերկանգնված տեսնենք երկրամասի այն սահմանները, որոնք ունեցել ենք 2020-ի պատերազմից առաջ:

■ Ադրբեջանական զնդաններից վերադարձած տեսնենք Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներին և հայ գերիներին ու պատանդներին:

■ Ունենանք գոնե մեկ իրական և անկեղծ բարեկամ-դաշնակից երկիր, որն օգնության կգա Հայաստանի Հանրապետությանը, եթե հայտնի երկրները հերթական ագրեսիան ձեռնարկեն ու մենք աջակցության կարիք ունենանք:

■ Ունենանք հայոց ազգային բանակի մարտական պատրաստության այնպիսի վիճակ, որ կարող կլինի ցանկացած պարագայում պաշտպանելու մեր հայրենիքը:

■ Օրինաբանենք չպարտված ու նահատակությամբ անմահացած մեր քաջորդիներին, մեր արևաբույր տղաներին, ովքեր 44-օրյա պատերազմում և հետո իրենց կյանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին ու միացան Ավարայրում, Սարդարապատում, Լեռնահայաստանի հերոսամարտում, Արցախյան առաջին և Ապրիլյան (2016 թ.) պատերազմներում մարտիրոսացած ու սրբացած մեր նախնիներին:

■ Չմոռանանք պատմական իրողությունը՝ Սյունիքի շրջանների և հարակից ադրբեջանական շրջանների միջև սահմանների ճշգրտում (մետր առ մետր) կատարվել է 1920-ականներին և 1980-ականներին:

■ Երկրում որդեգրված խաղաղության օրակարգը, խաղաղության ենթադրյալ պայմանագիրը և իրական ու արժանապատիվ խաղաղությունը միմյանց հետ (գոնե փոքր-ինչ) աղերսակցված տեսնենք:

■ Մեզանում ունենանք այն հայորդիներին, ովքեր ամենայն պատշաճությամբ կպատասխանեն Իլհամի՝ մեր երկրին պարբերաբար ուղղվող սպառնալիքներին, վերջ չունեցող ծաղրանքին ու ստորացնող արտահայտություններին:

■ Վերականգնված տեսնենք քաղաքացիական համերաշխությունը մեզանում, գիտակցենք՝ կուսակցական և թայֆայական շահերից վեր կա երկրի շահը, այս դեպքում՝ Սյունիքի ընդհանրական շահը, որի շուրջ (և ոչ թե կուսակցությունների կամ անհատների շուրջ) համախմբված լինենք:

■ Սուտը մեզանից վտարված լինի, իսկ դերասաններին տեսնենք միայն բեմահարթակներում, փուչիկ գոյություններին՝ փոքրիկների հանդեսներում, մեր դժբախտությունների և դժվարությունների վրա ձեռքեր տաքացնողներին, լժե-հայրենասերներին ու կավե ոտքերով դրոշակակիրներին՝ մերժվածների սալոնում կամ պատմության աղբանոցում:

■ Թող ականատես լինենք մեր երիտասարդների՝ կանաչ-կարմիրը կապելու հանդեսների, նորածին երեխաների աղմուկ-աղաղակի (ցավոք, մեզանում շատացել են չամուսնացած կամ ամուսնության չշտապող երիտասարդները, ինչը նկատելի է գրեթե բոլոր բնակավայրերում):

Իսկ եթե բանավիճելու ենք, ապա բանավիճենք հետևյալ հիմնախնդիրների շուրջ.

ա) ինչպե՞ս ապահովել արցախահայերի վերադարձն իրենց հայրենական օջախներ՝ անվտանգության իրական երաշխիքներով,

բ) ինչպե՞ս փրկել Սյունիքի լեռնային գյուղերը, չէ՞ որ հանրապետության ոչ մի տարածքում լեռնային կամ բարձրադիր գոտու գյուղերն այդպես անխոչընդոտ, անաղմուկ չեն մարվում, ինչպես Սյունիքում,

գ) ինչպե՞ս նախապատրաստել Սյունիքի բնակչությանը՝ ադրբեջանական հնարավոր ագրեսիայի դեպքում, մեր զինված ուժերի հետ մեկտեղ, պաշտպանելու Սյունիքի սահմանները, չէ՞ որ թշնամական այդ պետության հնարավոր ագրեսիան չեն բացառում անգամ մեր երկրի օրվա պատասխանատուները, ինչի վերաբերյալ ժամանակ առ ժամանակ հայտարարություններ են անում, չէ՞ որ Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչները չեն դադարում սպառնալիքները՝ ուժի զորությամբ բացելու երբևէ գոյություն չունեցած «Զանգեզուրի միջանցքը»,

դ) ինչպե՞ս չպետք է խաղալ երկրի արտաքին քաղաքականության հետ, այն էլ հիմա, երբ աշխարհի վերաբաժանում է տեղի ունենում, երբ դարերով գոյություն ունեցած սահմաններն են վերաձևվում, երբ միջազգային իրավունքը չի գործում, երբ ցեղասպանություն իրականացնող երկրների առաջնորդներին աշխարհի ուժային կենտրոններում դիմավորում են հոտնկայս ծափահարություններով:

Եվ, իհարկե, մեր սրտաբուխ շնորհավորանքն ենք բերում բոլոր սյունեցիներին: Որքան էլ արցախյան զուլումից հետո շնորհավորանք բառը կորցրել է իր սկզբնական և աստվածային նշանակությունը, միևնույնն է՝ Նոր տարին և Սուրբ Ծնունդը հայոց մեջ ամենասպասված ու նվիրական տոներն են:

Ուրեմն և՝ բարի Ամանոր և Սուրբ Ծնունդ բոլորիս:

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 Թ.

Գործարկվել է Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհը՝ որակով և բարեհարմարությամբ աչքի ընկնող

Արցախյան 44-օրյա պատերազմից, ավելի ստույգ՝ 2021 թ. նոյեմբերի 11-ից Գորիս-Կապան ճանապարհին ադրբեջանական մաքսային և սահմանային վերահսկողություն սահմանելուց հետո, Սյունիքի հարավային տարածաշրջանների հետ տրանսպորտային հաղորդակցությունը սկսեց իրականացվել Շինուհայրի խաչմերուկ-Տաթև-Կապան ավտոճանապարհով:

Դրանից հետո, իհարկե, ավարտվեց Տաթև-Աղվանի (ավելի վաղ մեկնարկած) ճանապարհի շինարարությունը, կառուցվեց Աղվանի-Վերին Խոտանան-Կապան ճանապարհը, սակայն....

Վերին Խոտանանի գյուղամիջով անցնող ճանապարհահատվածը, մասնավորապես Սուրբ Աստվածածին եկեղեցու մերձակայքի կտրուկ վերելք-ոլորանը, անընդհատ խոչընդոտներ էր հարուցում, ձմռան ամիսներին՝ հատկապես: Գյուղի մատույցներում ժամանակ առ ժամանակ կարելի էր տեսնել ընթացքը դադարեցրած մեքենաների շարասյուներ՝ երբեմն կիլոմետրերով ձգվող: Գյուղամիջի հատվածն առանձնապես դժվարությամբ էին հաղթահարում երկար ու ծանրաբաշ, նաև կցորդիչով մեքենաները՝ ժամերով փակելով մայրուղին՝ մինչև օգնության հասնող կլիներ:

Ստեղծված վիճակը հրամայական էր դարձրել Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի կառուցումը, որն էլ ընթացք ստացավ:

2022-ի տարեսկզբից մեկնարկած հողային աշխատանքները մոտ մեկ տարի անց հիմնականում ավարտվել էին:

Այդ ժամանակվանից էլ շրջանցող ճանապարհի կառուցումը նոր փուլ թևակոխեց, որը ստանձնեց «Ապառաժ» ՍՊ ընկերությունը՝ գլխավորությամբ Դավիթ Ավետիսյանի:

Եվ ահա՝ 2024-ի ձմեռնամուտին, գործարկվել է Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհը՝ այդքան սպասված ու պահանջված....

Մինչև ճանապարհի մասին որոշ տեղեկություններ ներկայացնելը՝ կուզենայինք վերստին նշել, որ պատասխանատու այդ նախագիծն իրականացնող «Ապառաժ» ՍՊ ընկերությունն արդեն իսկ ճանաչում և բարի համբավ ունի Սյունիքում...

Հինգ տարի և ճանապարհաշինական բազմաթիվ հասցեներ. Մ2 միջպետական ճանապարհի Շուռնուխ գյուղով անցնող հատվածի, Արծվանիկից Կարմրաքար ձգվող 5,1 կմ երկարությամբ ճանապարհի, Վարդավանք-Ագարակ 13,1 կմ երկարությամբ ճանապարհի հիմանորոգում: Միևնույն ժամանակ՝ սուբվենցիոն ծրագրերով տարբեր շինաշխատանքներ Կապան և Քաջարան համայնքներում: Իսկ ընթացիկ տարում՝ Լեռնաձոր գյուղից Փուխրուտ և Կաթնառատ ընկած ճանապարհի հիմնական մասի վերակառուցում, որի շարունակությունն ակնկալվում է 2025-ին:

Այսպիսի հետագիծ ունեցող ընկերությանն էլ վստահվել էր Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի կառուցումը:

Օրեր առաջ «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբն այդ ճանապարհին էր: Մեզ ընկերակցում էին «Ապառաժ»-ի կոմերցիոն տնօրեն, ընկերության ասֆալտ արտադրող գործարանի պատասխանատու Դավիթ Դանիելյանը, ընկերության Սյունիքի ստորաբաժանման ղեկավար Գարիկ Հովհաննիսյանը և, իհարկե, տեղամասի պետ Ասատուր Այվազյանը:

Չենք կարող չասել՝ տպավորված ենք, կահավորումից և գծանշումներից հետո կառույցն ամբողջական տեսքի է եկել:

Ճանապարհն ունի 10 կմ 940 մ երկարություն, ուղիղ տեղամասում լայնությունը՝ 6,6 մ, կորերի վրա (կորի շառավղից կախված) երբեմն՝ մինչև 11 մետր, կողնակների լայնությունը՝ 1.5 մետր:

Վարորդների լեզվով ասած՝ երթևեկելիս տեսադաշտը լիովին բաց է, վազանցի կամ կողանցի դեպքում խնդիրներ չեն առաջանում, ասել է՝ անվտանգ երթևեկության համար բոլոր պայմանները ստեղծված են:

Նորակառույցն անցնում է 1200-1500 մ բարձրությամբ տարածքով, ուստի և ճանապարհի սառցակալումն ու մառախուղը նվազ հավանական են, ոլորաններն ու շրջադարձերն էլ ավելի քիչ, քան մինչ այդ գործող ճանապարհին:

Առավելագույն երկայնական թեքությունը կազմում է 90 պրոմիլ, որ նույնն է՝ 9 %, ինչը համապատասխանում է տվյալ կարգի ճանապարհներին ներկայացվող նորմատիվներին:

Երկու տեղ գազատար խողովակը հատում է ճանապարհը, ինչին նույնպես խելամիտ ու անվտանգ լուծում է տրվել:

Ճանապարհի երկարությամբ, որոշ տեղերում, «գաբիոններ» (քարե պատնեշներ) են կառուցվել, որ հնարավոր հեղեղներն ու հորդառատ անձրևները չվնասեն ճամփեզրերը: Մանավանդ որ՝ ճանապարհը երկու տեղ հատում է Քաշունի գետակի հունը, որոշ տեղերում՝ անցնում հունին զուգահեռ: Իսկ ճանապարհի ու գետակի խաչվող տեղերում կառուցվել են «կուլվերտներ»:

Նորակառույց ճանապարհն այսպես բնութագրեց տեղամասի պետ Ասատուր Այվազյանը՝ **«Նոր կառուցված ճանապարհն ավելի երկար է մյուս ճանապարհից, բայց երկայնական թեքություններն անհամեմատ մեղմ են, իսկ կորերի շառավիղները՝ մեծ: Լայնական թեքությունները (վիրաժները) կառուցված են նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան: Այս է վարորդների գոհունակության և ավելի դյուրին երթևեկելու պատճառը:**

Վարորդներին թվում է, թե շրջանցիկ ճանապարհն ավելի կարճ է, քանի որ ժամանակի առումով անհամեմատ ավելի շուտ են անցնում»:

Շինարարության ընթացքում նախագծային որոշ փոփոխություններ են եղել, ինչը բնական պիտի համարել, քանզի աշխատանքների ընթացքում ի հայտ էին գալիս հանգամանքներ, որոնք նախագծելիս նկատելի չեն եղել կամ հաշվի չեն առնվել:

Մեր լեռնաշխարհում հաճախ սողանքային գոտիներ են ի հայտ գալիս ճանապարհներին, որոնք հավելյալ խնդիրներ են առաջացնում: Ասատուր Այվազյանի տեղեկատվությամբ՝ ճանապարհի 8,6 կմ հատվածում գերջրահագեցած գրունտային հատված կար: Ուստի և կատարվել են կանխարգելիչ աշխատանքներ, արդյունքում՝ առայժմ կասեցվել է երևույթը, բայց, ինչպես ասում են, բնության գործերն անքննելի են:

Կառուցվող յուրաքանչյուր ճանապարհի որակական գլխավոր չափանիշներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, ասֆալտի որակն է: Այդ առումով Դավիթ Դանիելյանը տեղեկացնում է, որ Կապանի նախկին երկաթբետոնե կառուցվածքների գործարանի տարածքում գործում է ընկերության՝ իտալական արտադրության՝ ժամում 90 տոննա արտադրողականությամբ ասֆալտ արտադրող գործարանը:

Ասֆալտի որակը, ըստ զրուցակցի, միշտ առաջնային է եղել ընկերությունում: Որպես կանոն, ասֆալտի նմուշները Երևան փորձաքննության ուղարկելուց առաջ ստուգվում են նաև ընկերության լաբորատորիայում, որպեսզի որակի հարցում խնդիրներ չառաջանան:

Եվ կառուցված ճանապարհի ասֆալտի ընդհանուր շերտի հաստությունը 16 սմ է (6սմ+6սմ+4սմ): Ասֆալտի տակ էլ քարերով ամրացված գրունտն է, ինչը ճանապարհին լրացուցիչ հուսալիություն է հաղորդում:

Նորակառույց ճանապարհի հետ «ծանոթությունն» ավարտեցինք այնտեղ, որտեղ նոր բացված ճանապարհը հատվում է Վերին Խոտանան-Տանձավեր ավտոճանապարհի հետ:

Կառուցված ճանապարհը երեք տարի երաշխիքային ժամկետ ունի, ասել է թե՝ որակի հետ ինչ-ինչ խնդիրներ առաջանալու դեպքում ընկերությունն ինքը պետք է շտկումներ անի սեփական ուժերով, թեև շինարարները վստահ են իրենց կատարած աշխատանքների որակի վրա:

Բայց ահա նորակառույցի ձմեռային սպասարկումը կիրականացնի «Կապանի ՃՇՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ավելորդ չենք համարում նշել՝ ճանապարհն անցնում է գեղատեսիլ վայրով, հատկապես գարնանը, ամռանն ու աշնանն այդ վայրերով երթևեկելն ուղղակի հաճույք կպատճառի երթևեկողներին: Ի դեպ, ճանապարհից տեսանելի են Վանանդա բերդի ավերակները, բերդ, որը, ըստ Սյունիքի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի, գավառի «անսասան ու հաստատուն ամրոցներից էր»:

Մեզ մնում է շնորհավորանքի և գնահատանքի անկեղծ խոսքեր հղել ընկերության տնօրեն Դավիթ Ավետիսյանին և ընկերության բոլոր շինարարներին՝ Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհի կառուցումը լավագույնս իրականացնելու և գործարկման հանձնելու կապակցությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.

ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ. «Ինքնակատարելագործման ձգտումը մարդուն պիտի ուղեկցի ողջ կյանքի ընթացքում»

Այցեքարտ. Արուսյակ Հակոբյան, ծնվել է Ջերմուկում, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն: 2013-ին ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան, այնուհետև ուսումնառությունը շարունակել է օրդինատուրայում՝ էնդոկրինոլոգ մասնագիտությամբ, Մուրացանի համալսարանական հիվանդանոցում: Երկու տարի սովորելուց հետո տեղափոխվել է Կապան, 2021-2022 թթ. վերապատրաստվել է մայրաքաղաքի «Աստղիկ» բժշկական կենտրոնում՝ որպես սոնոգրաֆիստ: Այժմ բժշկական գործունեությունը շարունակում է և՛ էնդրոկրինոլոգ, և՛ սոնոգրաֆիստ:

Ս եր ժամանակներում առողջապահությունը, բժշկագիտությունը հսկայի քայլերով են առաջ գնում. ժամանակակից կլինիկաներ են շարք մտնում՝ հագեցած բուժման նոր տեխնոլոգիաներով և բուժսարքավորումներով: Սրանք առավել շատ կենտրոններում են, իսկ ահա մարզերում հիպոկրատի երդում տվածները շարունակում են մարդկանց առողջությունը վերականգնելու պատվաբեր առաքելությունը: Երկար ժամանակ է՝ չենք անդրադառնում նրանց գործունեությանը: Որոշեցինք հանդիպել նրանցից մեկին: Այս անգամ մեր զրուցակիցը երիտասարդ բժշկուհի էր՝ Կապանի բժշկական կենտրոնից:

Նախ հետաքրքրվում եմ՝ հարազատների շրջանում բժիշկներ կա՞ն: Հայրը լուսանկարիչ է, մայրը՝ բուժքույր, իսկ ահա քույրը բժշկուհի է, թերապևտ, ընտանեկան բժիշկ, Երևանում է աշխատում:

Ժողովրդի մեջ տարածված արտահայտություն կա. Էնդոկրինոլոգին ժողովուրդն անվանում է շաքարի բժիշկ կամ զոբի (խպիպ) բժիշկ, և իրոք ավելի շատ տարածված են շաքարային դիաբետով հիվանդներն ու վահանաձև գեղձի խնդիրներ ունեցողները:

Տեղին է հիշեցնել, որ էնդոկրինոլոգիան (ներզատաբանություն) ուսումնասիրում է ներզատիչ գեղձերի զարգացումը, կազմությունը, ֆունկցիան, հորմոնների ֆիզիոլոգիական ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև մշակում է ներզատիչ համակարգի հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդներ: Իսկ ընդհանրապես էնդոկրինոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է ներքին ներզատական գեղձերի ֆիզիոլոգիան և խանգարումները:

– Ժողովրդի մեջ տարածված արատավոր մի սովորություն կա, մինչև դանակը ոսկորին չի հասնում, չեն դիմում բժշկի: Ի՞նչ վիճակով են մարդիկ դիմում էնդոկրինոլոգին:

– Տպավորությունն այն է, որ մարդիկ իրենց չեն սիրում: Երբ սկսում են սիրել, հետևողական են լինում իրենց առողջության հանդեպ: Մինչդեռ շատերը սեփական անձի հանդեպ անտարբեր են: Ասում են՝ տանն ունեմ փոքրիկ երեխա, թող ինքն առողջ լինի, ես մի կերպ յոլա կգնամ: Խնամում եմ փոքրիկիս, ամբողջ ուշադրությունս ինքն է, ինձնով զբաղվելու ժամանակ չունեմ: Իսկ տրամաբանականն այն է, որ նախ ինքդ քո առողջության մասին պիտի մտածես, որ կարողանաս ընտանիքիդ անդամներին օգտակար լինել: Մինչդեռ եթե քո առողջությունը վատ է, մերձավորիդ քո օգնածը թերի է լինելու, լիարժեք չի լինելու:

– Իսկ ե՞րբ են դիմում էնդոկրինոլոգին:

– Եթե առկա են հոգնածության զգացում, սրտխփոցներ, ծարավի զգացողություն, ընդհանուր թուլություն, քնկոտություն, աղիների անկանոն աշխատանք, խոլեստերինի բարձր մակարդակ, վերջույթների թմրածություն, դեպրեսիվ վիճակ, քաշի կտրուկ փոփոխություն: Իսկ ընդհանրապես Էնդոկրինոլոգիան թերապիայի ամենաընդգրկուն մասնագիտություններից է, և դրա հիմքի վրա մանավանդ արտասահմանում բաժանվում է նեղ մասնագիտացումների: Մեզանում էլ միտումն արդեն կա. էնդոկրինոլոգ, որ զբաղվում է միայն դիաբետիկներով, կա այդ բնագավառի մասնագետ, ով զբաղվում է պացիենտի հորմոնալ խնդիրներով: Ընդհանրապես դիաբետիկ գանգատները մի դրսևորում են ունենում, վահանաձև գեղձինը՝ բոլորովին մի այլ բան: Մանկական էնդոկրինոլոգիան առանձնապես մի այլ բնագավառ է:

Զրուցակիցս տեղեկացնում է, որ բժշկական կլինիկաներում սկրինինգային հետազոտություններ են սկզբնավորվել, այսինքն՝ չեն սպասում, որ մարդը գանգատ ունենա: Մարդու տարիքային շեմը լրանում է, պոլիկլինիկայից կանչում են հետազոտության: Ասենք՝ ստուգում են գլյուկոզայի քանակն արյան մեջ: Թիվը բարձր է, ուղարկում են էնդոկրինոլոգի մոտ:

Ի՞նչ նախասիրություններ ունի Արուսյակ Հակոբյանը: Ազատ ժամանակ համարյա չի ունենում: Երկու բալիկ ունի՝ երկու և չորս տարեկան, նրանց է մեծ ժամանակ հատկացնում: Շատ է կարոտում հայրենի Ջերմուկը, ձգտում է տարին մեկ-երկու անգամ լինել ծննդավայրում: Նախասիրություններից է շախմատը, շատ է սիրում իմաստունների այդ խաղը: Ժամանակին երկընտրանք կար. սպո՞րտ, թե՞ բժշկություն, ինչպես տեսնում եք, հաղթեց այս վերջինը:

Սիրո՞ւմ է ընթերցանությունը: Միանշանակ: Բայց նախընտրում է մասնագիտական գրականություն կարդալ: Իսկ ընդհանրապես կարծում է, որ ինքնակրթությունը, ինքնակատարելագործման ձգտումը մարդուն պիտի ուղեկցեն ողջ կյանքի ընթացքում: Այս համատեքստում շատ է կարևորում բժշկական վերապատրաստումների դերը: Ցանկությունն այն է, որ արտասահմանում մասնակցի վերապատրաստման կամ գիտաժողովի...

Հրաժեշտից առաջ երիտասարդ բժշկուհին հիշեցրեց հայտնի խոսքը՝ հիվանդությունը կանխարգելելն ավելի դյուրին է, քան բուժելը:

Անսանք այդ անառարկելի ճշմարտությանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՖԵՐՄԵՐ ՄԱՐԱՏ ԱՄԻՐՋԱՆՅԱՆԸ՝ ԾՂՈՒԿԻՑ. «Գյուղացիներիս շատ են խեղճացնում...»

Նրան հանդիպեցինք պատահաբար, երբ դեկտեմբերի 22-ին այցելել էինք Սիսիանի տարածաշրջանի այդ գյուղը:

1990-ականներից հայրենի գյուղում զբաղվում է անասնապահությամբ:

Ներկայումս ունի քսան կթու կով, մի քանի երինջ, հորթեր...

Անասնագոմը, որտեղ իրականացնում է անասունների ձմեռային պահվածքը, սեփական է, իր ընտանիքն է կառուցել:

Անասունների խնամքն իրականացնում է կնոջ և երեխաների հետ:

Կաթը հանձնում են «Բորիսովկա» ՍՊ ընկերությանը. մթերման գինն առայժմ բավարարում է՝ մեկ լիտրը՝ 160 դրամ, բայց և հույս ունի՝ մի քիչ էլ գինը կբարձրանա: Ամռանը, մինչդեռ, մթերման գներն ակնհայտորեն ցածր են:

Տնտեսության գործերը պատշաճ վարելու համար ձեռք է բերել անհրաժեշտ մեքենաներ. խոտահավաք, խոտհնձիչ, մամլիչ, բեռնատար...

Մարատ Ամիրջանյանը նաև լուրջ մտահոգություններ ունի: Նախ՝ 1990-ականներին գյուղի հողերն իբր բաժանել–սեփականաշնորհել են, բայց մինչև հիմա չեն որոշակիացրել, թե կոնկրետ որ հողամասն ում է պատկանում:

Մարատ Ամիրջանյանը նաև լուրջ մտահոգություններ ունի: Նախ՝ 1990-ականներին գյուղի հողերն իբր բաժանել–սեփականաշնորհել են, բայց մինչև հիմա չեն որոշակիացրել, թե կոնկրետ որ հողամասն ում է պատկանում: Ըստ նրա՝ **«Հողեր ունենք, բայց 30 տարի շարունակ չենք կարողանում ճշտել՝ որտեղ է այդ հողակտորը, ու տարիներ ի վեր չի հստակեցվում: Կամ այցելում ենք իբր 4 հա չափ ունեցող հողամաս, չափում ենք և ինչ... Իրականում կես հեկտար է: Եվ այդ խառնաշփոթի հետևանքով ոմանք շատ հող ունեն, ոմանք՝ ոչինչ»:**

Իհարկե, շատ ամոթ է, որ 1990-ականներից մինչև հիմա Ծղուկում չեն կարողանում կարգավորել չափազանց կարևոր այդ հարցը, մինչդեռ...

– Արդարացի կլիներ, որ հողերը նորից չափեին և հետո միայն մեզանից հարկեր պահանջեին, իսկ հիմա հողիս տեղը չգիտեմ, բայց և չեղած հողի համար հարկ են պահանջում,– ասում է Մարատ Ամիրջանյանը:

Ֆերմերը նշում է նաև, որ Արցախյան վերջին պատերազմից հետո խոտհարքների և արոտների հարցում նույնպես լուրջ խնդիրներ են առաջացել:

– Պատերազմից հետո անասունների գլխաքանակը պակասել է, որովհետև խոտը հիմնականում բերում էինք սահմանամերձից, որտեղ հիմա անվտանգ չէ: Հետպատերազմյան շրջանում Գորայքի տարածքից ենք խոտհարքներ վարձակալում ու այնտեղից խոտ բերում: Եվ եթե գարնանը խոտի պակաս ենք ունենում, գնում ենք կատարում, ներկայումս մեկ տուկը 700-800 դրամ է, բայց կհասնի 1000 դրամի, – շարունակում է իրավիճակը ներկայացնել մեր զրուցակիցը:

Կովերի բարձր կաթնատվության մասին խոսք լինել չի կարող, քանզի չկան երբեմնի խտացված կերերը:

Ծղուկում չեն մոռանում տարիներ առաջ տեղի ունեցածը, երբ բրուցելյոզի պատճառով գյուղի ամբողջ անասնագլխաքանակը վերացվեց: Ուստի և շատ ուշադիր են դարձել անասնաբուժական ծառայությունների հարցում, սակայն անասնաբույժը հարևան գյուղում է: Վերջերս էլ կատարել են բրուցելյոզի դեմ կանխարգելիչ պատվաստում:

Եվ քանի որ մեր հանդիպումն Ամանորի շեմին էր, Մարատ Ամիրջանյանը կամեցավ իր շնորհավորանքը փոխանցել ընթերցողներին՝ **«Թող 2025-ը արժանապատիվ խաղաղության տարի լինի, առողջության տարի, բայց և հիշեք՝ գյուղացիներիս շատ են խեղճացնում, այդ մասին պետք է մտածել»:** //

Սահմանապահ Մուցքի հոգսերը

Դեկտեմբերի 22-ին մեր ստեղծագործական խումբը Սիսիանի տարածաշրջանի Մուցք գյուղում էր:

1970-ականներից՝ տարբեր կարգավիճակներով, գյուղը ղեկավարող Դրաստամատ Նավասարդյանի հետ մեր հանդիպումը ցանկալի էր ու սպասված:

Գյուղխորհրդի երբեմնի նախագահը, կոլտնտեսության վարչության նախագահն ու գյուղապետը հիմա Սիսիանի համայնքի Մուցք գյուղի վարչական ղեկավարն է:

Հայրենի գյուղի ութնամյան, Անգեղակոթի միջնակարգը, Սիսիանի պրոֆտեխուսումնարանը, Գորիսի գյուղտեխնիկումն ավարտած Դրաստամատ Նավասարդյանին իմաստություն է բերել հատկապես տարիների փորձը, մարդկանց հետ աշխատելու բնատուր կարողությունը, ինչի շնորհիվ էլ բնօրրան Մուցքում վայելում է մարդկանց հարգանքը:

Մեր հանդիպման ընթացքում առաջարկեցինք նրան՝ Նախիջևանի սահմանով ձգվող սարերի բարձունքին բազմած գյուղից խոսք ուղղել սյունեցիներիս՝ գալիք Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ:

Ահա և նրա խոսքը. **«Կյանքում իմ առաջնահերթ խնդիրը հայրենի երկրամասին նվիրվելն է եղել, այդպես էլ ապրել եմ: Ուզում եմ, որ յուրաքանչյուրս սիրով, նվիրումով պահպանենք և ուժեղացնենք Սյունիքը: Ուզում եմ, որ ավելի ամրապնդենք մեր սահմանները: Մեր գյուղը՝ մոտ 3 կմ երկարությամբ, սահմանակից է Շահբուզի շրջանի Բիչանագ գյուղին: Եվ մենք մեր ապրած կյանքով գիտենք, թե ինչ ասել է սահմանապահ կամ սահմանամերձ գյուղ: Այդքանի հետ մեկտեղ՝ մեր երկրին արժանապատիվ խաղաղություն եմ ցանկանում, թող մեր երեխաները բանակում բարեհաջող ծառայելուց հետո ողջ և առողջ վերադառնան իրենց ընտանիքի գիրկը:**

Իմ հայրենակիցներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ, յուրաքանչյուրիդ ողջություն ցանկանում և երազանքների ու ծրագրերի իրականացում: Աստված մեզ և մեր ժողովրդին պահապան»:

Դրաստամատ Նավասարդյանը նաև խոսեց Մուցքի բնակիչների մտահոգությունների մասին: Գլխավորն այդ թվում Շաղատից մինչև գյուղ ձգվող մոտ 5 կմ երկարությամբ ճանապարհի խայտառակ վիճակն է: Մարդիկ հույս են փայփայում, որ գոնե 2025-ին այդ խնդիրը կլուծվի:

Խմելու ջրի խնդիր էլ կա՝ ակունքները պետք է վերանորոգվեն:

Գյուղում առևտրի կետ չկա, ուստի և անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելու համար Սիսիան են մեկնում, բայց ճանապարհի անմխիթար վիճակը թանկ հաճույք է դարձել տաքսիների ծառայությունից օգտվելը:

Ուսումնական տարվա ընթացքում երթուղային տաքսին օրական մեկ անգամ մանկավարժներին գյուղ է բերում, իսկ ամառային արձակուրդներին այդ երթուղին չի գործում:

Գյուղում գրեթե երիտասարդներ չկան, մեծամասնությունը 60 և ավելի տարիքի է:

Գյուղացիները ձմռանն աթարի հույսին են, ինչպես հազարամյակներ շարունակ:

Դե իսկ սահմանի մերձակա տարածքները, հասկանալի պատճառով, չեն մշակվում:

Դրաստամատ Նավասարդյանը հիշեցնում է նաև, որ Մուցքը խորհրդային օրերում հզոր տնտեսություն է ունեցել՝ 1200 խոշոր եղջերավոր անասուն, 3000 գլուխ մանր, 150 մեղվափեթակ, 200 գլուխ խոզ... Հիմա երեք անգամ պակասել է խոշորի գլխաքանակը, էականորեն նվազել են մյուս ցուցանիշները նույնպես: Ու այդ ամենը վկայում է գյուղի ծերացած լինելու մասին:

Գյուղում ներկայումս գրանցված 350-360 բնակչից ձմռան ամիսներին բնակվում է 120-ը: Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ:

Դպրոցում 7 աշակերտ կա:

Եվ, այդ բոլորով հանդերձ ու բարեբախտաբար, գյուղում նախատոնական տրամադրություն էր տիրում...

* * *

Բնակավայրը հայտնի է Ուրարտական ժամանակներից: 1975 թ. Թանահատի վանքում հայտնաբերված Արգիշտի 2-րդի սեպագիր արձանագրության մեջ Ծուլուկու (Ծղուկ) երկրում նշվում են երկու քաղաք՝ Իրդուա և Ամուշա: Ուրարտագետների կարծիքով Ամուշան համապատասխանում է Մուցքի հետ: Այդ սեպագիրն էլ հիմք է տվել Ս. Ումառյանին, որպեսզի Մուցք տեղանունը բացատրի խեթական Մեցուլա աստծու անունից ծագած:

Տաթևի եպիսկոպոսարանի 1781 թ. մատյանում Մուցքը նշված է Մազրա անունով (Մազրա բառը, ըստ Հ. Աճառյանի, նշանակում է մշակելի հող, արտ, հանդ):

Ներկայիս գյուղը, հին գյուղատեղում, հիմնադրել են Խոյից և Սալմաստից 1828-29 թթ. եկածները:

Հետագայում գյուղը դարձել է տարածաշրջանի խոշոր բնակավայրերից մեկը՝ 1200-ից ավելի բնակիչներով:

Գյուղում մնացած միակ հնությունը եկեղեցին է՝ կառուցված Սուրբ Աստվածածնի անունով՝ 1870 թ., հավանաբար հին աղոթատեղիում, որին կից 1890 թվականից գործել է ծխական դպրոցը:

Մազրան Բարձրավան է վերանվանվել 1946 թ. սեպտեմբերի 10-ին, իսկ 1949 թ. հայտնի է դարձել, երբ աշորայի բարձր բերքի աճեցման համար կոլտնտեսության նախագահ Եգոր Հախվերդյանը, ինչպես և բրիգադավարներ Գ. Բալասանյանը, Ս. Խոսրովյանը, Գ. Մաիլյանը, Հ. Հախվերդյանը, Վ. Թադևոսյանն արժանացել են ԽՍՀՄ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Հայրենատիրությունը ստեղծագործ աշխատանք է ենթադրում. ԱԼԵՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՀԱՎԱՍԻԿ

Ալեն Դավթյանը մեր ընթերցողին հայտնի է դեռևս 2022 թվականից: Այն ժամանակ ներկայացրել էինք 2016-ին նրա հիմնած այգեգործական տնտեսությունը: Միգուցե և այդ նախաձեռնությունը հանրային մեծ ուշադրության չարժանանար, եթե իրագործված չլիներ ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա՝ Քաջարանց գյուղի արևմտյան բարձունքներում, որտեղ սովորական երևույթ են ուժեղ քամիները, որտեղ ավանդաբար լոբի ու կարտոֆիլ էին միայն ցանում...

Անցած ութ տարին ցույց տվեց, որ Ալեն Դավթյանը կարողացել է հետամուտ լինել այդ ծրագրի իրագործմանը՝ ապացուցելով, որ տվյալ բարձրադիր գոտում կարելի է և մրգաստան ստեղծել:

Արդյունքում՝ 13 հա հողատարածք ընդգրկող այգում արդեն 18 հազար մրգատու ծառ կա: Ընդ որում՝ երկրորդ տարին է՝ դեղձենիներն ու ծիրանենիներն առատ բերք են տալիս:

Ընթացիկ տարում արդեն իսկ 15 մլն դրամի եկամուտ է բերել այգին...

Պարզվում է սակայն, որ ճարտարագետ ու տնտեսագետ Ալեն Դավթյանի՝ հայրենի եզերքի մերօրյա նվիրյալի եռանդն ու ծրագրերը դրանով չեն սահմանափակվել ու սահմանափակվում:

Քաջարան քաղաքի խմելու ջրի երբեմնի մաքրման կայանը, որ 1980-ականներից անտերության էր մատնված ու կիսավեր վիճակում էր, նոր տեսք ու նշանակություն է ձեռք բերել: Այն նախ մասնավորեցվել է և դարձել Ալեն Դավթյանի պապի սեփականությունը, ով էլ ժառանգել է թոռներին:

Եվ ահա 650 քառակուսի մետր մակերեսով շենքը հիմնանորոգվել է ամբողջապես՝ տանիքից մինչև առաջին հարկ:

Այդտեղ էլ մոտ վեց ամիս առաջ հիմնադրվել է մեխանիկական արտադրամաս, որտեղ 12 բարձրակարգ մասնագետ պատրաստում-արտադրում են, ինչպես իրենք են հավաստիացնում, «երկաթի հետ կապված ամեն ինչ»:

Ավելի կոնկրետ՝ առայժմ արտադրվում են մանեկ (տարբեր չափսերի), պահարաններ, հանքարդյունաբերության մեջ մեծ պահանջարկ ունեցած ֆիլտրեր, հեղույս, պնդօղակ, ցանցավանդակներ, լիսեռներ...

Իբրև հումք հիմնականում օգտագործվում է ռուսական մետաղը, որի որակական հատկանիշները, ըստ մասնագետների, բավականին բարձր են:

Միևնույն ժամանակ՝ արտադրության համար անհրաժեշտ որոշ նյութեր ձեռք են բերվում Իրանի Իսլամական Հանրապետությունից և Չինաստանից:

Արտադրանքի հիմնական սպառողներից են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը, Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը...

Նորաստեղծ արտադրամասի արտադրանքի հանդեպ պահանջարկն այնքան մեծ է, որ Քաջարանց գյուղում առկա արտադրական մակերեսը չի բավականացրել, ուստի և արտադրական նոր տարածք են վարձակալել Կապան քաղաքում:

Արտադրամաս կատարած մեր այցի ընթացքում հանդիպեցինք աշխատակիցների հետ, որոնցից մի քանիսին ներկայացրեց ճանաչված խառատ Մուրադ Դավթյանը, ով կենսաթոշակի անցնելուց հետո Զանգեզուրի պղնձամոլիբդենայինից տեղափոխվել է այդ արտադրամաս:

Ահա բարձրակարգ մասնագետներից մի քանիսը, որոնց փորձի և հմտության շնորհիվ ծնունդ է առնում որակյալ արտադրանքը՝ Էդուարդ Ալեքսանյան (6-րդ տարակարգի ֆրեզերային օպերատոր), Անդրանիկ Առաքելյան (6-րդ տարակարգի խառատ), Գագիկ Համբարձումյան (6-րդ տարակարգի զոդող):

Մուրադ Դավթյանն անդրադարձ կատարեց նաև արտադրամասի ստեղծման պատ-

Շարունակությունը՝ էջ 7

Հարցազրույց Լևոն Սահակյանի հետ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ

Հունվարի 26-ին լրանում է բանաստեղծ, Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունքի նախագահ Լևոն Սահակյանի 70-ամյակը:

– Պարոն Սահակյան, նախ ընդունեք մեր շնորհավորանքը հոբելյանի առթիվ, Ձեզ՝ քաջ առողջություն և ստեղծագործական հաջողություններ:

– Շնորհակալ եմ: Տարիքը հարստություն է, ինչպես ասվում է հանրահայտ երգի մեջ: Անցա վայրիվերումներով լի մի ճանապարհ, գտա իմ կոչումը, դարձա ինձ ընկեր ու այսօր էլ դեռ ճանապարհին եմ:

– Մեր հանդիպումից առաջ ծանոթացանք Ձեր կենսագրությանը: Կապանի շինարարական տեխնիկում, աշխատանք տարբեր շինկազմակերպություններում, ծննդավայր Ակների ակումբի վարիչ և... խոսքի աշխարհ: Անցումը, որքան տեսնում ենք, այնքան էլ սովորական չէր, ինչպե՞ս ստացվեց:

– Ավարտել եմ Կապանի շինարարական տեխնիկումը, Գորիսի «Սյունիք» ինստիտուտը՝ տնտեսագետ-ֆինանսիստ մասնագիտությամբ, 1973-75 թթ. ծառայել եմ ԽՍՀՄ բանակում, 1992-94 թթ. եղել եմ Ակներ գյուղի կամավորական ջոկատի շտաբի պետը, աշխատել եմ տարբեր կազմակերպություններում՝ բանվոր, ակումբի վարիչ, անվտանգության ինժեներ, շինարարության վարպետ, պահեստապետ, թերթի աշխատակից, հաշվապահ, աշխատակազմի քարտուղար, իսկ 2017 թվականից ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի նախագահն եմ: Այո, անսովոր ու դժվարին էր անցածս ուղին: Ինձ հեշտ ոչինչ չի տրվել: Թիկունք չունեի: Ընտանիք պահել էր հարկավոր: Կարելի է ասել և այսպես՝ իմ իսկական գործն արել եմ երկրորդական գործերի արանքում: Ու այս անսովորի դրականը նրանում է, որ կյանքից տարատեսակ դասեր եմ առել, հարստացել, պարզել իմ պղտորությունն ու հիմա Տիրոջ հետ հանդիպման ու զրույցի համար սպասման մեջ եմ...

– Ծանոթ ենք Ձեր հեղինակած գրքերին, բանաստեղծությունների հիմնական մասին, տեղյակ ենք նաև Ձեր ստեղծագործությունների վերաբերյալ գրականագիտական-գրաքննադատական որոշ գնահատականների: Բայց կուզենայինք, որ ինքներդ (հնարավորինս համառոտ) ամփոփեիք ու ներկայացնեիք Ձեր գրական ժառանգությունը:



– Մինչ այժմ հրատարակել եմ 16 գիրք: Տպագրվել եմ տարբեր թերթերում, ամսագրերում և ալմանախներում: Գրում եմ չափածո և արձակ: Գրականագետների, գրողների և ընթերցողների կողմից կան անդրադարձներ՝ տպագրված իմ «Երկեր» գրքում (2016 թ.):

Ներկայումս աշխատում եմ 17-րդ գրքի վրա, որում կներառվեն իմ տարբեր տարիներին հրատարակված և անտիպ գործերը՝ խորհրդածություններ, պատմվածքներ, հոդվածներ, հուշեր, մանրապատումներ ու գորիսյան բարբառով ժողովրդական հումոր, իմ մշակմամբ:

– Եվ, այդուհանդերձ, որո՞նք են լավագույն կամ գոհացնող գործերը Ձեր ստեղծագործություններում:

– Իմ, ինչպես Դուք եք ասում, լավագույն ու գոհացնող գործերը ներառել եմ 2024 թվականին տպագրված «ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ» գրքում, որն անպայմանորեն կնվիրեմ ձեր խմբագրությանը:

– Ձեր ստեղծագործությունների թեմատիկան, ի՞նչն է Ձեզ մտահոգում, ի՞նչ եք քարոզում, ո՞րն է Ձեր ասելիքը:

– Ստեղծագործությանս առանցքը ԿՅԱՆՔՆ է: Եթե նկատել եք, ես առանձնակի թեքում չունեմ որևէ կոնկրետ ուղղությամբ: Ինչ կյանքն ունի՝ իմն է՝ լավ, թե վատ: Լավի համար գոհանում եմ, փառք տալիս Աստծուն, վատի դեմ պայքարում, որ այն նաև իմ միջամտությամբ քչանա...

Մտահոգված եմ տիեզերքի, մեր տուներկրագնդի, հայրենիքի և մարդու ճակատագրով, ասելիքս էլ այդ շրջանակներում է ու զրուցակիցս՝ հազարահրաշ-աշխարհարարը:

– Ովքե՞ր են Ձեր ստեղծագործությունների հերոսները, արդյո՞ք նրանց մարդկային տեսակը կամ նրանց նախատիպերը շարունակում են Ձեզ հրապուրել, թե՞ փոփոխվող ժամանակաշրջանի հետ փոփոխվում են նաև նախընտրելի հերոսները:

– Իմ հերոսը ՄԱՐԴՆ է, իր պարզությամբ ու արդարամտությամբ, իր բարդությամբ ու բացասական նկրտումներով: Իմ ամբողջ կյանքում փորձել եմ հասկանալ աստվածատուր այս էակի էությունը, պեղել եմ, խորացել ու եկել այն համոզման,

... Որ այս վերքերի, մեղքերի համար
Պետք չէ մարդկանց մեջ փնտրել մեղավոր...

– Ի սկզբանե, որքան հասկացանք, Ձեզ գայթակղել է բանաստեղծությունը, իսկ փորձե՞լ եք ուժերն օգտագործել արձակում:

– Գրում եմ նաև արձակ: Հրատարակել եմ «Կատակում է Գորիսը» (1994 թ.), «Ակների պատմություն» (2000 թ.), «Գորիսյան ժպիտներ» (2002 թ.) և «Գրամատյան» (2006 թ.) գրքերը:

Առաջիկայում կտպագրվի իմ «Արձակ տողեր» գիրքը: Իսկ որոշակիության համար ասեմ՝ ինձ համար բանաստեղծությունն առաջին տեղում է, արձակը՝ երկրորդ:

– Բանաստեղծ Լևոն Սահակյանի գրելու տեխնոլոգիան, բառը, տողը Ձեզ համար:

– Ինձ հոգեհարազատ է բանաստեղծության դասական ձևը: Ձգտում եմ քիչ բառերով շատ բան ասել, պահպանել բանաստեղծության երաժշտականությունը, ռիթմը:

Կարծում եմ՝ Լևոն Սահակյան բանաստեղծն ունի իր յուրահատուկ ոճը, ասելիքը, բառի որոնման անհոգնել տենչը, տողը վերջնական տեսքի բերելու արհեստավարժ հմտությունը: Նա ծառայում է ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ոչ ոքից ոչինչ չպահանջելով, գերազանց գիտակցելով, որ՝

Պոետի պարտքը լավ գրելն է լոկ
Ու հանրությունը պարտք չէ պոետին:

– Ովքե՞ր են Ձեր գրական ուսուցիչները կամ ո՞ւմ ազդեցությունն եք ավելի շատ կրել ու կրում:

– Թվարկեմ՝ Նարեկացի, Թումանյան, Իսահակյան, Չարենց, Սևակ, Բլոկ, Խայամ, Եսենին, Տյուտչև, Բյոռնս, Էմին, Մ. Իշխան, Վ. Դավթյան...

Ազդեցության առումով ասեմ՝ բանաստեղծը նման է մեղվի, բազում ծաղիկներից նեկտար է առնում ու պատրաստում ԻՐ ՄԵՂՐԸ:

Պոետների էության և նրանց առաքելության մասին հիանալի է ասել երջանկահիշատակ Ֆելիքս Բախչինյանը. «Նրանք մարդկության թթվածինն ու ջուրն են, լույսն ու ջերմությունը, խիղճն ու մաքրությունը, մարդկության անմեղ երեխաներն ու նրա հոգու մեջ լույսեր վառող փոքրիկ ու աննշան լուսատիկները, որոնց լույսը, սակայն, պարզապես կուրացուցիչ է գիշերային խավարում... Բանաստեղծները չեն հաղթում, քանզի չարն ու չարիքը անհաղթելի են, բայց չեն էլ պարտվում, այլ մնում են չհանձնված, չստրուկ, չգերի...»:

– Ձեր սիրած մեծագույն կամ լավագույն գործը հայ գրականության մեջ:

– Որպեսզի անաչառ լինեմ, պատասխանեմ այսպես՝ Նարեկացու «Մատյան ողբերգությանը», Թումանյանի քառյակները, Իսահակյանի «Աբու Լալա Մահարին» ու մնացած հայ գրողների լավագույն գործերը:

– Ինչպես քիչ առաջ ասացինք՝ Ձեր ստեղծագործությունների հանդեպ ձևավորված որոշակի հայացք կա, գրականագիտական վերաբերմունք: Ըստ Ձեզ՝ ո՞վ է առավել օբյեկտիվ և ամբողջական ներկայացրել–բնութագրել բանաստեղծ Լևոն Սահակյանին: Եվ, եթե կարելի է, բնութագրական այդ խոսքից մեկ–երկու նախադասություն:

– Եղել են մասնակի ներկայացումներ: Սպասենք ամբողջական ներկայացնողին:

Ներկայացվածներից կուզեի առանձնացնել հետևյալները՝

Գևորգ Էմին - Ունես ասելիքդ բանաստեղծորեն ներկայացնելու աստվածատուր շնորհ: Քո ոճն ու քչախոսությունը հարազատ են ինձ նրա համար, որ ինքս էլ ինժեներ եմ ու սիրում եմ խոսքի ռացիոնալը: Առավել շատ ինձ գրավեցին քո խոսքի կուլտուրան և պատասխանատվության անթաքույց զգացումը: Գրիր, աշխատիր տքնաջան, հաջողությունը իրեն երկար չի սպասեցնի: (1978 թվական):

Մետաքսե (բանաստեղծուհի) - Քո ամենամեծ առավելությունն այն է, որ հեռու ես ավելորդ պաճուճանքներից, Տղամարդավարի ուզում ես ԲԱՆ ասել ու ասում ես... (2003 թ.):

Լևոն Անանյան - ... Գրքիդ շատ բանաստեղծություններ երկրորդ անգամ ընթերցվելու պահանջ են ներկայացնում: Խոսքդ սահուն է, անկեղծ, առինքնող... (2013 թ.):

Թեմինա Մարության (բ.գ.թ., դոցենտ) - Իմ խորին համոզմամբ՝ Ձեր պոեզիան արժանի է ամենաբարձր գնահատության: Ձեր մաքուր և բնական ձայնով ստեղծած գործերն իրենց հետքը թողնում են իսկական ընթերցողի սրտում (2015 թ.):

Լիլիթ Թունյան (բ.գ.թ.) - Ուշադրություն դարձրեք լեզվական պատկերավորման միջոցներին, որոնք ստեղծագործության շաղախ-շինվածքն են և այն դարձնում են թեթև, խաղացկուն, ի հայտ բերում գրողի, բանաստեղծի գեղագիտական ինքնատիպությունը, երևակայությունը, մտքի թռիչքը... (2015թ.):

– Հավանաբար փորձել եք ճշտել՝ Ձեր գրականությունն ո՞ւնի ընթերցող, ո՞ր բանաստեղծությունները և ո՞ր ժողովածուներն են առավել շատ պահանջված ընթերցողի կողմից:

– Ճիշտն ասած առանձնակի դիտարկումներ չեմ արել, սակայն տարբեր անձանց կողմից հնչած ու հնչող անդրադարձները վկայում են, որ Լևոն Սահակյան բանաստեղծն ընթերցվում է ու հարգի է ընթերցողների շրջանում:

Իմ բանաստեղծություններն իմ զավակներն են և նրանցից յուրաքանչյուրը հոգեհարազատ ու թանկ է ինձ համար: Կարծում եմ՝ լավագույնների ընտրությունը պիտի կատարի ընթերցողը, գրականագետն ու գրաքննադատը:

– Մեր ժողովուրդը վճռորոշ ժամանակներ է ապրում, շարունակում ենք անցնել փորձությունների մի-

Անդրադարձներ



ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Հարգարժան Լևոն Սահակյան, իմ կրտսեր ընկեր ու բարեկամ, հեղինակածդ 16 ժողովածուներում ամփոփված գործերը, որ քո ստեղծագործական կյանքի առհավատչյան են, լավագույնս ծանոթ են գրական շրջանակներին և ընթերցող հանրությանը: Հոբելյանիդ առթիվ շնորհավորանքի այս խոսքում գրաքննության չեմ ենթարկի քո բանաստեղծական աշխարհը, բայց չեմ կարող չտեսնել ու չընդգծել ապրելակերպիդ մի թվացյալ մանրուք, որը շռայլ ու բյուրեղյա է դարձրել քո գրական հունձքը: Դու այն սերնդից ես, որը երկրի փլուզումների փոթորկոտ հորձանուտները հաղթահարեց հասունացման տարիքում: Քեզ չհրապուրեց մեծ քաղաքների կանչը, հրատարակչություններին մոտիկ լինելու մարմաջը, հողը, տունը, երկիրը հեռվից սիրելու ու «լաց ու կոծով» կարոտելու սրտաճմլիկ երգասացությունը...: Քեզ համար անփոխարինելի մնացին քո Բռուն-Ակների քարափ-քաշկառները, «ոտից գլուխ պղտորված» քո խելահեղ Վարարակնի դղրդոցը, քո ձոր ու աշխարհ սնող Ակնաջրի ակունքները, «ձյութի նման հողին կպչող մառախուղը թավ», որ «գալիս է հանց հյուր ու դառնում տանտեր»... Եվ այդ հայրենիի համար, որ վտանգված էր, դու դարձար երկրապահ, պաշտպանը սրբասար Իշխանասարի ու Իշխանա ծովի... Ու պիտի հոգիդ ոգեր՝

Հայաստան երկրում զինվորի պակաս
Եվ ավելցուկ կա բանաստեղծների.
Սրանից է, որ որոշ պոետներ
Ընկերանում են ինքնաձիգներին...

Թերթում եմ քո ժողովածուները, նորից ու նորից համոզվում, որ տարիների մեջ մաքրվող ու բյուրեղացող քո տողերի զտիչ-ֆիլտրները Սյունիք երկիրն է, Ձագեձոր խարամը, քո հողը, տունը և նրանցում ապրող մարդիկ...

Գրիչդ բեղուն է, բերքդ՝ առատ, հավատում եմ, որ դեռ նոր որակներով պիտի վրձնահարես քո անզուգական աշխարհի հրաշք երանգները:

ՇՆՈՐՀԱՎՈՐ:

Առողջություն քեզ ու գերդաստանիդ, որ շատ կարևոր է, իսկ գալիքի համար դու արդեն նշել ես՝

... Ու այդ հոգսերի բեռը ուսերիս՝
Մինչև վերջ պիտի գնամ ես համառ,
Աչքերիս առջև՝ մարտը երեկվա
Եվ հուշերիս մեջ՝ հայկ ու Ավարայր...
Ու Ձորն ասում է՝ ՊԵՆԴ ԿԱՑ:



ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

Փոստային առաքումդ շենշող և ցնծալուր եղավ ինձ համար: Բանաստեղծությունների 262 էջանոց հատորյակն ընդունում եմ որպես ապրուստի կերպ ու միջոց, որպես սյունեցու ոգեղենության կենարար աղբյուր ու անզուգական խթանիչ, որպես իմ ու իմ սերունդների ապառնական ժամանակների ուղղորդիչ ու ստնտու, որպես իմ մանկավարժական սիրահարվածության նորահայտ լիցք...

Ամեն էջում գտնում եմ բանաստեղծի ու բանաստեղծական գյուտ, ընթերցողին հոգևոր ձեռքմեկնումի ազնվափայլ մղում, հայկականության ու համամարդկային շեշտում ու հավաստում.

Ելա տիեզերք, ոտք դրի լուսնին,
Սակայն երկիրս՝ գաղտնիքներով լի,
Եվ որքան էլ ինձ պեղեցի խորը,
Հոգին իմ մնաց անվերծանելի:

Մտադիր եմ երբևէ ամուր գրկել քեզ:

2013 ԹՎԱԿԱՆ

Հայրենատիրությունը ստեղծագործ աշխատանք է ենթադրում. ԱԼԵՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՀԱՎԱՍԻԿ

Սկիզբը՝ էջ 5

մությանն ու նրա ներկա գործունեությանը, մասնավորապես նշելով՝ «Արտադրամասը հիմնադրել և ղեկավարում են Ալեն ու Մարատ Դավթյան եղբայրները: Այս շինությունը՝ կառուցված խորհրդային տարիներին, իսկական ավերակի էր վերածվել: Նրանք ամբողջապես հիմնանորոգեցին շենքը, ձեռք բերեցին անհրաժեշտ հաստոցներ և այլ սարքավորումներ, որոնք էլ տեղադրվեցին ու գործարկվեցին:

Հաստոցները, ինչպես տեսնում եք, խորհրդային տարիների արտադրանք են, որոնք դիմացկուն են ու չեն կորցնում իրենց արդիականությունը: Պարզապես պետք է մասնագետ լինի, որ կարողանա աշխատեցնել: Մի խոսքով՝ գերազանց հաստոցներ են, բազմապրոֆիլ:

Մոտ վեց ամսվա գործունեությունը ցույց է տալիս, որ արտադրամասն ի վիճակի է բարձրորակ ու պահանջված արտադրանք թողարկել: Ընդ որում՝ առաջնահերթությունը տալիս ենք որակին: Մինչև հիմա մեր մատակարարած դետալների համար ստացել ենք միայն դրական արձագանք: ԶՊՄԿ-ում աշխատող ռուս մասնագետները նույնպես քանիցս շնորհակալություն են հայտնել՝ արտադրանքի որակի համար:

Արտադրամասում առողջ մթնոլորտ է, տասնյակ տարիների ընկերներ ենք, դասընկերներ, գործընկերներ:

Մեր արտադրամասը, կարող ենք ասել, երկու հիմնական խնդիր ունի, առաջին՝ թողարկել բարձրորակ արտադրանք, երկրորդ՝ երիտասարդ կադրեր պատրաստել»:

Արտադրամասում ընդգրկված է նաև Արցախից բռնագաղթված մեր մի քանի հայրենակից, ովքեր առանձնահատուկ հոգատարությամբ են շրջապատված:

Իսկ Ալեն Դավթյանը, ամեն ինչից զատ, իր հերթական նախաձեռնության գլխավոր նպատակներից է համարում նոր աշխատատեղերի ստեղծումը, տեղացի բարձրակարգ մասնագետների տասնամյակների փորձի օգտագործումը և, իհարկե, տեղի տնտեսվարողների ու մասնավորապես հանքարդյունաբերական ձեռնարկությունների համար անհրաժեշտ որոշ սարքավորումների արտադրության կազմակերպումը:

Ալեն Դավթյանը նաև բարձր է գնահատում «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետևողական գործունեությունը՝ տարածաշրջանում փոքր և միջին ձեռնարկատիրությանը նպաստելու, տեղացի որակյալ կադրերի ներուժն օգտագործելու, ընկերության համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների մի մասը (հնարավորության դեպքում) այստեղ պատրաստելու կամ ձեռք բերելու ուղղությամբ:

«ՊՈՕ-ՆԷԴ» ՍՊԸ ընկերությունը, որ ներկայացնում ենք այսօր, ծնունդ է առել և կայացման ճանապարհի նախնական փուլն անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի աջակցությամբ: Աջակցությունը, անտարակույս, գլխավոր պայման է այս դեպքում, սակայն ոչ պակաս կարևոր է որ գործի գլխին կանգնած լինի կարող ուժ, աշխատող-արարող անձնավորություն, ինչպիսին Ալեն Դավթյանն է: Հերթական անգամ նա ապացուցում է, որ հայրենատիրությունը ստեղծագործ աշխատանք է ենթադրում, որ տեղական ռեսուրսները (նաև կադրային) խելամիտ օգտագործելու խնդիր ունենք, որ հայրենի եզերքի ամեն մի պտղունց հողը մշակելու կարիք ունենք, քանզի հողն այդպես է զորանում ու հայրենիք դառնում:

Եվ ամենակարևորը՝ նա համաձայն չէ իր հայրենի Քաջարանց գյուղի ապագայի շուրջ ժամանակ առ ժամանակ ծավալվող հուսակոտոր խոսակցություններին՝ համոզված լինելով՝ հազարամյակների խորքից եկող Քաջարանցը կա և անպայման պիտի լինի...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Աշոտ Խաչատրյանը 60 տարեկան է. շնորհավորում ենք

Կան մարդիկ, որոնց ի վերուստ ուղեղնշված է դժվարին ճանապարհ, բայց որոնք չվարանելով՝ աներկյուղ են անցնում կյանքի համար բացված արահետը, քանզի բարությունը, հաստատակամությունը և սկզբունքայնությունն են նրանց ուղեկիցները: Այդ անհատներից է Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Վլադիկի Խաչատրյանը:

Սիրելի Աշոտ Վլադիկի, առասպելական աշխատասիրություն, բարձր պատասխանատվություն, բանիմացություն, ստեղծագործական միտք, անմնացորդ նվիրում, ստանձնած գործը հաղթական ավարտին հասցնելու պատվախնդրություն – սա է Ձեր նկարագիրը: Կարողանում եք համատեղել կազմակերպչական, մանկավարժական և, որպես թավջութակահար, կատարողական աշխատանքը՝ չթերանալով գործունեության ոչ մի ճակատում:

Աննկարագրելի է Ձեր ավանդը Կապանի արվեստի պետական քոլեջի կայացման գործում: Ձեր անսպառ աշխատասիրությունը, անաչառ նվիրումը բազմիցս գնահատել են ոչ միայն ուսանողները, ծնողներն ու գործընկերները, այլև պետական այրերն ու հասարակությունը:

Շնորհավորելով 60-ամյակի կապակցությամբ, մաղթում ենք արևշատություն, երջանկություն, ցանկանում, որ միշտ ծփա Ձեր մտահղացումների անափ օվկիանը, և կյանքի յուրաքանչյուր ակնթարթն իմաստավորված լինի բարու և գեղեցիկի հաղթանակով:

ԿԱՊԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿՈԼԵԿՏԻՎ

Ջով: Ձեր կարծիքով՝ մեր ներկա ընթացքը որքանո՞վ է արտացոլվում գրականության մեջ: Դուք, օրինակ, ունե՞ք գործեր՝ մեր նոր իրականությունն արտահայտող:

– Այո՛, ունեմ, այդ գործերն ամփոփված են իմ «Ընտրյալները» գրքի «Երկրիս հետ» բաժնում: Հետաքրքրվողը կարող է դիմել ինձ, ունենալ գիրքը և ծանոթանալ նրանց հետ:

... Կռիվ եմ տալու ես ՄԱՐԴՈՒ համար
Ոսոխների դեմ ներսի ու դրսի.
Եվ պահելու եմ երկիրն իմ հոգում,
Որ չկոշտանա և որ չմրսի...

* * *

Ժամանակն էլ քեզ չի պատկանում,
Դու հիմա հույսն ես հայրենիքի,
Այս խառն օրերի զինվորն ես դու՝
Առանց մեռնելու իրավունքի...

– Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունքի նախագահն եք, ի՞նչ է իրենից ներկայացնում այդ բաժանմունքը:

– ՀԳՄ Սյունիքի բաժանմունքը գտնվում է Գորիսի մշակույթի տան երկրորդ հարկում և արդեն յոթերորդ տարին է՝ գործում է իմ նախագահությամբ: Անցկացնում ենք գրական հանդիպումներ, միջոցառումներ, գրքերի շնորհանդեսներ, օգնում ենք սկսնակ գրողներին, գրականության դաշտում օգնության կարիք ունեցողներին: Այն դարձել է մի յուրահատուկ «Գրօջախ», որի տեղը գիտի ամեն իսկական ստեղծագործող: Կարող եմ վստահորեն պնդել՝ Սյունիքում ոչ մի շնորհալի պատանի կամ երիտասարդ չի կարող մնալ անհայտ: Բաժանմունքի աշխատանքները կարող էին լինել ավել արդյունավետ, եթե պետության կողմից լիներ նվազագույն աջակցություն, որպեսզի դեպի Կապան, Սիսիան, Մեղրի քաղաքներ պարբերաբար գնալ-գալու հնարավորություններ առաջանար և շփումները ստեղծագործողների միջև դառնային հաճախակի ու մոտիկից:

– Գրական մթնոլորտը Սյունիքում, ովքե՞ր են այունեցի գրողները, բանաստեղծները, որ արդեն իսկ իրենց մնայուն տեղն ունեն մեր գրական անդաստանում և շատ թե քիչ ճանաչում ունեն հանրապետությունում:

– Գրական լավագույն ավանդությունները շարունակվում են Սյունիքում: Ունենք հույսեր ներշնչող մոտ 15 ստեղծագործող: Ներկայումս Սյունիքից ՀԳՄ անդամ են Գագիկ Դավթյանը, Հրանտ Գյուլասարյանը, Ներսես Խառատյանը, Տիգրան Գրիգորյանը, Լևոն Սահակյանը, Էդուարդ Հարենցը, Ավագ Եփրեմյանը, Մարի Առաքելյանը, Վարուժան Գալստյանը, Արթուր Առաքելյանը, Վարդան Սարգսյանը, Սուսաննա Խաչատրյանը (թարգմանչուհի), Հայկուշ Օհանյանը, Հերմինե Նավասարդյանը:

Հենց այս վերոնշյալներն էլ ունեն իրենց մնայուն տեղը մեր գրականության մեջ և ճանաչված են հանրապետությունում:

– Ի՞նչ կասեք նրանց, ովքեր հայոց Արցախը համարում են Ադրբեջանի մաս, ովքեր Արևմտյան Հայաստանի ու Արևմտյան Ադրբեջանի միջև զուգահեռներ են անցկացնում՝ նկատի ունենալով կեղծիքը, թե Արևմտյան Ադրբեջանը ներկայիս Հայաստանի Հանրապետությունն է:

– Կասեմ այսպես՝ նրանք կամ անգրագետ են կամ հարմարվողներ կամ էլ դավաճաններ: Մեր ազգի մի ստվար մասը պետականության հարգը չգիտի: Մեր ղեկավարներն ու դիվանագետները հեռատես, ճարպիկ ու ճկուն չեն: Արցախյան պատերազմի ժամանակ ունեցանք զինվորականների շրջանում «պանիկա» տարածողներ, քաղաքական պատվեր կատարողներ: Կուսակցություններից որոշները ոչ միայն չմիացան պատերազմի ժամանակ, այլև բանակի ներսում գործեցին ի հօգուտ ոսոխի և իրենց ամբիցիաների: Ինչպե՞ս բացատրել Շուշիի հանձնումը, հարյուրավոր զինյալների գերի ընկնելը, քաջաբար կռվող մեր տղաներին մենակ, անողեկավար թողնելը (վկաների պատմածներից): Ազատ ու անկախ և հողին տեր լինելու միակ պայմանը ուժեղ, զարգացած երկիր կառուցելն է: ԱՀԱ ՍՐԱ ՄԱՍԻՆ ՊԻՏԻ ՄՏԱԾԵՆՔ:

– Ի՞նչ եք մտածում այն մասին, որ Սյունիքի մարզից մի քանի հարյուր հեկտար հողատարածք է բռնազավթված Ադրբեջանի կողմից:

– Այսպիսի ասույթ կա՝ «Ով չի տիրապետում ինքն իրեն, նրան տիրապետում են ուրիշները»: Մենք չկարողացանք պահպանել մեր ազատագրված տարածքները, որվհետև մեր անհեռատես ղեկավարները հույսները դրել էին ժամանակին մեր հողերով թուրքերին լավություն արած ռուսների վրա և բանակաշինությանը նայում էին մատների արանքով: Ու անկախության տարիներին փոխանակ բանակ կառուցելու, մեզ մոտ պալատներ էին կառուցվում, մեկը մյուսից լավ, զարմացնող...

Ահա, թե ինչու են մեր տարածքները բռնազավթված ու մեր վաղը՝ անորոշ:

Երկրին հզոր ՏԵՐ է հարկավոր, երկաթե կարգապահություն, գործուն, անտատան օրենքներ, միասնական գաղափարախոսություն ...

– Յոթանասուն տարին բավական լուրջ տարիք է, բայց և իմաստնությամբ ու փորձով լեցուն: Ի՞նչ նոր ծրագրեր ունեք:

– ...Երեկ էր, արի քայլս առաջին
Ու բարբառում է այսօր մի ահել...

Ապրածս յոթանասուն տարիների ընթացքում անցա վայրիվերումներով լի մի ճանապարհ, նեղվեցի, գոհացա, հիասթափվեցի, երջանկացա, հասա բարձունքների, որ անհասանելի էին թվում, հարստացա իմաստնությամբ ու հասկացա, որ՝

Իմ կյանքը թանկ չէ մրջյունի կյանքից,
Բնության համար՝ թե մարդ, թե մրջյուն.
Այդ մենք ենք, մենք ենք մեզ կարևորում,
Բնության համար՝ թե մարդ, թե մրջյուն...
Հասկացա նաև, որ՝
Կյանքի լավ կողմն է ինձ ապրեցնում,
Թևաթափում է վատ կողմը նրա.
Եվ որքան էլ ինձ փորձեն համոզել՝
Հարմարվել վատին չեմ կարողանա:

Ներկայումս աշխատում եմ իմ «Արձակ տողեր» գրքի վրա և հույսով սպասում հայանպաստ լուրերի ու շրջադարձերի:

– Ձեր սերունդը մի քանի «դարաշրջան» ապրեց՝ խորհրդային շրջան, անկախության հռչակում, անկախության տարիներ, Արցախյան երեք հերոսամարտ, հայ ժողովրդի ցեղասպանություն Արցախում...

Ինչի՞ համար եք ափսոսում, ինչո՞վ եք հպարտանում, ի՞նչ չիրականացված ծրագրեր, սխալներ կամ բացթողումներ ունեցաք տարիների ընթացքում:

– Բնորոշեմ այսպես՝ խորհրդային տարիները կիսաերջանիկ անիմացության տարիներ էին, անկախության հռչակումը պարտադրված էր, անկախության տարիները սխալ ապրած տարիներ էին:

Ափսոսում եմ, որ առողջ դատողության կողքին կյանքն ունի նաև այսքան հիմարություններ: Հպարտանում եմ աշխարհի լավագույն մարդկանց գոյությամբ: Ցավում եմ, որ չկարողացա փոխել մարդուն...

Թերությունն՞ո, ինչ խոսք, ունեմ,
Ո՞վ մեզանից չունի,
Միայն պետք է հսկել դրանց,
Որ չփոխվեն թույնի...

– Ի՞նչ խորհուրդ կտայիք երիտասարդությանը, ապրելու ի՞նչ բանաձև կառաջարկեիք Սյունիքի սահմանապահ գյուղերի երիտասարդությանը:

– Կցանկանայի, որ մեր երիտասարդները լավ սովորեն: Օրինակելի դաստիարակություն ստանան, չհայհոյեն, աղբ չթափեն հասարակաց վայրերում, պահպանեն մեր ապուպապերի դրական ավանդությունները, չխուսափեն բանակային ծառայությունից, վաստակեն հալալ աշխատանքով, իրենց եսը կարողանան դնել մենքի մեջ, երկրի պետականության մասին մտահոգվեն այնպես, ինչպես իրենց պատվի, մեծանան ու ապրեն որպես իսկական ՔԱՂԱՔԱՑԻ...

Այսօր մարզերից որոշ մարդիկ փախչում են մայրաքաղաք, մայրաքաղաքից՝ ամերիկաներ: Կցանկանայի, որ դադարեցվեին այս «քողարկված փախուստները» ու բնիկ երևանցին սահմանային գյուղի բնակչի հետ մտածեր նույն կերպ երկրի հոգսերի և անելիքների մասին:

– Եվ վերջին հարցը՝ արդյո՞ք գրականագիտությունը, գրաքննադատությունը, գրական մամուլը կարողանում են հետևել կենտրոնից հեռու բնակավայրերում ստեղծագործող մարդկանց գրական գործերին, աջակցում և ուղղորդում նրանց:

– Հիշում եմ, ԽՍՀՄ օրոք Երևանից գրողների ու գրականագետների գործուղում էին հեռու բնակավայրեր՝ ստեղծագործողներ հայտնաբերելու, օգնելու և տպագրելու համար: Այդ հանդիպումները, ճիշտ է, հաճախակի չէին, բայց կային: Ներկայումս նման բան չկա: Որքան տեղյակ եմ, այս բնագավառ էլ են թափանցել շուկայական օրենքները: Գրքի առաջաբան կամ գրական խոսք անվճար գրվում է բարեկամի կամ ծանոթի համար, իսկ օտարի համար՝ գումարով... Ու դա, ցավոք, անում են նաև ճանաչված, հարգի գրականագետները: Այնպես որ՝ հեռու բնակավայրերում ստեղծագործողի ամենաառաջին օգնողը և խորհրդատուն մնում է ՀԳՄ բաժանմունքը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Գորիսի տարածաշրջանի «Զանգեզուր» թերթը 90 տարեկան է

Ուղիղ 90 տարի առաջ այս օրը լույս է տեսել «Զանգեզուր»-ի առաջին համարը:

90 տարի անց, դեկտեմբերի 5-ը տոն դարձրեց Գորիսի մամուլի ակումբը, որի ջանքերով թվայնացվեց «Զանգեզուր» թերթի 90-ամյա կենսագրականը:

Թերթի թղթային տարբերակն էլեկտրոնային տեսք ստացավ և թվայնացված նյութերն այլևս հասանելի են հետազոտողների, պատմաբանների, դասախոսների, փորձագետների, լրագրողների, հասարակության լայն շրջանակների համար:

Օրվա խորհրդով կազմակերպված ցերեկույթին ներկա էին թերթի բոլոր ժամանակների խմբագիրներ, աշխատակիցներ, լրագրողներ և նրանք, ովքեր սերտ համագործակցել են «Զանգեզուր»-ի հետ:

Հանդիպմանը Գորիսի մամուլի ակումբի տնօրեն Սուսաննա Շահնազարյանը, ով նույնպես հանդիսացել է «Զանգեզուր»-ի խմբագիր, հուզմունքով ներկայացրեց դրվագներ անցած ուղուց՝ նշելով, որ անձնական երազանքն է

իրականություն դարձել:

Ութ տարի թերթի խմբագրի պաշտոնը

ստանձնած, այժմ «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանն էլ հիշողություններով ներկայացրեց թերթի անցած դժվարին ուղին:

22 տարի թերթի խմբագրությունում աշխատած, «Լաստ» հեռուստաընկերության տնօրեն Ալվարդ Մեսրոպյանը շնորհակալություն հայտնեց Սուսաննա Շահնազարյանին՝ հայրական ծուխը ծխեցնելու համար՝ «Զանգեզուր»-ը համարելով հայրական օջախ:

Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանն էլ կարևորելով տպագիր մամուլը՝ նշեց, որ շատ տպագիր թերթերի մեջ իր լուրջ ուղին է կերտել թերթը:

Վարդան Սարգսյանի առաջարկն ընդունելով՝ Մամուլի ակումբը թերթի տպագիր օրինակները կփոխանցի Ա. Բակունցի տուն-թանգարանին:

Օրվա ավարտին տոնական տորթը կտրում են զանգեզուրցիները, միմյանց մաղթում արևշատություն և հաջողություն:

LAUS լրատվականը շնորհակալություն է հայտնում Գորիսի մամուլի ակումբ (Goris Press Club) -ին, հանձին Սուսաննա Շահնազարյանին, նման գեղեցիկ նախաձեռնության, տպագիր լրատվականի պատմության կերտման համար:

Թերթի թվայնացված տարբերակին ծանոթանալու համար անցնել հղումով՝ zangezurtert.am:

05.12.2024

Տղերքը բանակ են մեկնում. բարի ծառայություն...

Հանրապետությունում 2024 թ. նոյեմբերի 25-ից մինչև 2025թ. հունվարի 31-ը հայտարարված է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ձմեռային զորակոչ:

Սյունիքի մարզում տարվա առաջին զորակոչի մեկնարկը տրվեց Գորիսում՝ հունվարի 8-ին:

Վաղ առավոտվանից Գորիսի զինկոմիսարիատին հարող տարածքը լի էր մարդկանց բազմությամբ: Հայրենասիրական երգերի ու երաժշտության հնչյունների ներքո հավաքվել էին Գորիսի տարածաշրջանի բնակավայրերն ընդգրկող երեք խոշորացված համայնքի՝ Գորիսի, Տեղի, Տաթևի բազմաթիվ բնակիչներ՝ հայոց ազգային բանակ ճանապարհելու իրենց զավակներին, եղբայրներին, ընկերներին, բարեկամներին...

Ներկայանում եմ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման նորանշանակ ղեկավար, գնդապետ Վահրամ Հարությունյանին, ով մոտ 30 տարվա զինծառայության հարուստ կենսագրություն ունի: Ծնվել է 1974թ. հունիսի 24-ին Եղեգնաձոր քաղաքում: 1997թ. գերազանցությամբ ավարտել է հայկական գյուղատնտեսական ակադեմիան, նույն տարվանից ընդգրկվել հայոց բանակում, զբաղեցրել տարբեր հրամանատարական պաշտոններ: ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով 2024թ. նոյեմբերի 18-ից նշանակվել է ներկայիս պաշտոնին:

Փորձառու հրամանատարի կենսագրության մի շրջանը կապված է Սյունիքի հետ: Տարիներ առաջ, բանակային տարբեր կորպուսների հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի պաշտոնում (թեև նստավայրը Գորիսն էր), հաճախ էր լինում Մեղրիում, Կապանում, Քաջարանում, Կարմրաքարում, Սիսիանում: Գիտի սյունեցու բնավորության առանձնահատկությունները, կամային ուժեղ հատկանիշները, որոնց շնորհիվ Սյունիքը թշնամու դեմ պայքարի դրոշակակիր է եղել դարեր շարունակ:

Ստորաբաժանման ղեկավարի թույլտվությամբ այցելում եմ զինկոմիսարիատի կաբինետները, որտեղ բժշկական հանձնաժողովը՝ Շողիկ Թունյանի ղեկավարությամբ,

զորակոչվողների վերջին բուժզննումներն է իրականացնում, կատարում անհրաժեշտ փաստաթղթավորում: Այստեղ են մասնագիտական տարբեր ուղղվածության՝ Գորիսի ճանաչված բժիշկները՝ վիրաբույժ, թերապևտ, մաշկաբան ... Որպեսզի չխաթարվի հանձնաժողովի աշխատանքը, Գորիսի բժշկական կենտրոնի փոխտնօրեն, բժիշկ Լևոն Հարությունյանին հընթացս հարցնում եմ նորակոչիկների առողջական վիճակի մասին: Պարզվում է՝ թեև բոլորն առողջ են, բանակային ծառայության համար պիտանի, բայց ունեն որոշ սահմանափակումներ: Այդքանով դրական համարեց իրողությունը, որ չկան զինվորական ծառայությունից խուսափելու միտումներ:

Գորիսի տարածաշրջանի երեք խոշորացված համայնքի ղեկավարներից միջոցառմանը ներկա էր Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը: Զորակոչի առթիվ իմ շնորհավորանքին ի պատասխան, համայնքապետն

ասաց, որ եկել է բանակ ճանապարհելու համայնքից զորակոչվող երիտասարդներին:

Գորիսի մշակույթի կենտրոնի աշխատակից Նելլի Արզումանյանը Դավիթ-Բեկի, Անդրանիկի, Նժդեհի կյանքի սյունիքյան կարևոր դրվագները համեմեց Վազգեն Սարգսյանի բոցաշունչ խոսքերով:

Գորիսի զորամասի հոգևոր սպասավոր Գևորգ սարկավագ Մկրտչյանն աղոթեց նորակոչիկների համար և օրհնության խոսք ասաց:

Գնդապետ Վահագն Մինասյանի հրամանատարությամբ գործող զորամասի նվագախմբի պետ-զինվորական դիրիժոր, կապիտան Միեր Ներսիսյանի ղեկավարությամբ զինվորական նվագախումբը կատարեց Հայաստանի և հայոց բանակի օրհներգերն ու քայլերգեր:

Ելույթ ունեցավ ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, Սյունիքի ԵԿՄ նախագահ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը: Նա շնորհավորեց գնդապետ Վահրամ Հարությունյանին՝ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար նշանակվելու առթիվ և ներկաներին կոչ արեց ամուր կանգնել մեր պետության, բանակի կողքին՝ երկրի ու բանակի հզորացման համար անելով առավելագույնը:

Գնդապետ Վահրամ Հարությունյանը կարևորեց նորակոչիկների մարտական պատրաստվածությունը, զինվորական կանոնադրության պահանջներին համապատասխան կարգապահ ծառայությունը:

Նա շնորհավորեց նորակոչիկներին՝ հայոց բանակի շարքերը համալրելու կապակցությամբ և մաղթեց անփորձանք ծառայություն:

Գնդապետը մեզ հետ զրույցում հավաստիացրեց, որ իր լիազորությունների շրջանակում նորակոչիկների ծնողներին կաջակցի ցանկացած հարցում:

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի անունից շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ասաց մարզի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մարատ Պետրոսյանը:

№ զորամասի սերժանտական խորհրդի նախագահ, սերժանտ Էդգար Մալխասյանը, ում ծառայության ավարտին մնացել է երկու օր, նշեց, որ չնայած ավարտում է ծառայությունը, բայց պատրաստ է, անհրաժեշտության դեպքում, կրկին լինել շարքերում:

Վերջում նորակոչիկներից մեկի փոքրիկ քույրիկը՝ Ինեսան, հանդես եկավ բանակ մեկնող եղբայրներին նվիրված «Իմ զինվոր եղբայր» գեղեցիկ բանաստեղծությամբ:

Միջոցառման բարձր մակարդակով անցկացմանն աջակցեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի տունը (տնօրեն՝ Հայկ Խաչատրյան, օպերատոր-տեխնիկ՝ Գրիշա Հովսեփյան):

Այնուհետև Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ մոմավառություն: Նորակոչիկների հաջող ծառայության, հաջող վերադարձի համար աղոթք բարձրացրեց և օրհնության խոսք ասաց Տեր Տիգրան քահանա Հակոբյանը:

ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ադրբեջանը և Թուրքիան չեն պատրաստվում հանդուրժել Հայաստանի Հանրապետության գոյությունը, իսկ մենք շարունակում ենք թաղված մնալ ճղճիմ խոսակցությունների և մեռելածին օրակարգերի մեջ

Սկիզբը՝ էջ 1

* * *

Լավ կլիներ, որ ՀՀ վարչապետն ընդուներ «Արևմտյան Ադրբեջան»-ի համայնքի ներկայացուցիչներին. որքան ինձ հայտնի է, նրանք պատրաստ են գնալ նաև Երևան: Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, այս մասին ասել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հունվարի 7-ին տեղական հեռուստալիքներին տված հարցազրույցում:

«Այսօր ՀՀ-ն ներկայանում է որպես եվրոպական ժողովրդավարության ճանապարհով գնացող Երկիր: Թող դա պարզ ցույց տա: Այդ հարցն օրակարգից չի հանվի այնքան ժամանակ, քանի դեռ ադրբեջանցիներն անվտանգության պայմաններում չեն տեղակայվել «Արևմտյան Ադրբեջանում, այդ թվում ՝ Արևմտյան Զանգեզուրում», – ասել է նա:

* * *

2024 թ. դեկտեմբերի 19-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը թվարկել է Հայաստանի նկատմամբ պահանջները:

«Россия сегодня» միջազգային տեղեկատվական գործակալության գլխավոր տնօրեն Դմիտրի Կիսելևին տված հարցազրույցում Ադրբեջանի նախագահը հրապարակել է երևակայական վնասի թիվը:

«Վերջերս ավարտեցինք պատճառված վնասի վերլուծությունը, ընդ որում՝ մանրամասն վերլուծությունը: Մենք դրա վրա ծախսել ենք 4 տարի, և ամեն ինչ փաստաթղթավորված է: Խոսքն ավելի քան 150 միլիարդ դոլարի մասին է՝ այն վնասի, որը հասցվել է օկուպացիայի տարիներին»,– ընդգծել է Ալիևը:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի նախագահը խոսում է Արցախյան առաջին պատերազմի արդյունքների մասին, որը հենց Ադրբեջանն էլ սանձազերծել է:

«Եվս երկու կետ, որ հայկական կողմը պետք է անի: Առաջինը՝ փոխի իր Սահմանադրությունը: Որովհետև Սահմանադրության մեջ հղում կա Անկախության հռչակագրին, որն իր հերթին տարածքային պահանջներ է պարունակում Ադրբեջանի նկատմամբ, որը նախկին ԼՂԻՄ-ը հայտարարում է Հայաստանի մաս: Ուստի Սահմանադրություն փոխելը մեր քմահաճույքը չէ, դա սոսկ օբյեկտիվ պայման է»,– շարունակել է Ալիևը:

«Եվ մեր երկրորդ պայմանը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարում: Քանի որ այս հարցը լուծվում է կոնսենսուսով, առանց Հայաստանի համաձայնության դա ֆորմալ առումով անհնար է անել: Թեև ԵԱՀԿ Մինսկի խումբը վաղուց չի գործում, բայց ֆորմալ առումով կա, և մեր հարցն այն է, որ եթե Հայաստանը ճանաչել է Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս, իսկ Մինսկի խումբը ստեղծվել է Ղարաբաղի հարցը լուծելու համար, ապա ինչի՞ն է դա անհրաժեշտ: Այսինքն՝ Հայաստանի դժկամությունը լուծարելու և մեզ հետ միասին ԵԱՀԿ-ին՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը լուծարելու պահանջով դիմելու համար վկայում է այն մասին, որ ռեվանշիստների ծրագրերը բավականին լուրջ են»,– հայտարարել է Ալիևը:

* * *

«2021 թվականից մինչ օրս Ադրբեջանն ավելի քան 19 միլիարդ մանաթ (մոտ 10 մլրդ դոլար) է հատկացրել Ղարաբաղի և Արևելյան Զանգեզուրի վերականգնման համար»,– հունվարի 3-ին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը՝ շեշտելով, որ «Մեծ վերադարձ» ծրագիրը Բաքվի համար 2025-ին կշարունակի մնալ առաջնահերթություն:

Նա նշել է, որ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված է 4 միլիարդ մանաթ հատկացնել՝ **«օկուպացիայից ազատագրված հողերի վերականգնման համար, իսկ 2020 թվականից 2024 թվականը ներառյալ այդ նպատակով պետական բյուջեից հատկացվել է մոտ 17,5 մլրդ մանաթ»**:

«Ղարաբաղի և Արևելյան Զանգեզուրի վերականգնումը ֆանտաստիկ տեմպերով է ընթանում: Շուտով այդ շրջանները կդառնան ամենաժամանակակից, հարմարավետ և գեղեցիկ վայրերից մեկը ոչ միայն Ադրբեջանում, այլև Կովկասում և ամբողջ աշխարհում»,– եզրափակել է Ալիևը:

2023-ի նոյեմբերին էր դեռ Ալիևը հայտարարել, որ մինչև 2026 թվականի վերջ նախատեսվում է ավելի քան 140 հազար մարդու վերադարձնել Ղարաբաղ և Արևելյան Զանգեզուր»: Նրա խոսքով՝ «Մեծ վերադարձ» ծրագրով նախատեսված է, որ 2026 թվականի վերջին Ֆիզուլիի շրջանում 22 հազար մարդ է բնակվելու, իսկ Ղարաբաղում և «Արևելյան Զանգեզուրում»՝ 140 հազար մարդ:

//

Վերահրատարակվել է Տիգրան Գրիգորյանի «Անմահության համանվագ» գիրքը

Ժողովածուն 2015 թ. լույս տեսած «Անմահության համանվագ» գրքի վերահրատարակությունն է՝ որոշակի լրացումներով, որն ընթերցողին է ներկայացնում բանաստեղծություններ, պոեմներ, լեգենդների մշակումներ, թարգմանություններ, որոշ արձակ ստեղծագործություններ, գրական անդրադարձներ, գրական դիմանկարներ և հեղինակի հարցազրույցը:

Գրքում ընդգրկված են նաև հեղինակի ստեղծագործական աշխարհի մասին գրված կարծիքներ:

25 տպագրական մամուլ ծավալով (400 էջ) գիրքը տպագրվել է Երևանի «Վան Արյան» հրատարակչատանը:

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը շնորհավորում է տարիների իր մեծ բարեկամ Տիգրան Գրիգորյանին՝ «Անմահության համանվագ» բարձրարժեք գրքի վերատպագրության կապակցությամբ և նրան ցանկանում ստեղծագործական նորանոր հաջողություններ:

13.12.2024

ԿՈՐԵԼ Է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն վարչության Մեղրի մաքսային կետ բաժնի 2-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ Սիրվարդ Համբարձումի Ղազարյանի 0872 համարի մաքսային ծառայողի վկայականը: Համարել անվավեր:

«Զանգեզուրի միջանցքը» Թուրքիայի համար անփոխարինելի նախագծերից է

«Զանգեզուրի միջանցքը» Թուրքիայի համար անփոխարինելի նախագծերից է: Anadolu գործակալության փոխանցմամբ՝ նման հայտարարություն է արել Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն:

«Ելնելով մեր տեղակայման վայրի այս առավելություններից՝ մենք ստեղծում և կատարելագործում ենք մեր տրանսպորտային և հաղորդակցման ռազմավարությունները՝ հաշվի առնելով գլոբալ ու տարածաշրջանային պայմանները: «Զարգացման ուղի» ծրագրի շրջանակում, որը Չինաստանից, Արևելյան Ասիայից և Հնդկաստանից բեռներ կհասցնի Եվրոպա, մենք աշխատանքներ ենք տանում միջազգային համագործակցության ուղղությամբ: «Զանգեզուրի միջանցքի» (չակերտները՝ խմբ.) ներդրման շնորհիվ ուղիղ մուտք կապահովենք Ադրբեջան, Կենտրոնական Ասիա և Հեռավոր Արևելք»,– հայտարարել է Ուրալօղլուն:

Արդեն ավելի քան 3,5 տարի է՝ Ադրբեջանը փորձում է իրագործել, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք»-ի ծրագիրը, որն, ըստ Բաքվի, պետք է անցնի Սյունիքի մարզի տարածքով ու այդ երկրի արևմտյան հատվածները միացնի Նախիջևանին: Նախատեսվում է ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհների կառուցում: Երևանը նշում է, որ դեմ չէ ճանապարհների բացմանը, բայց դա պետք է լինի հայկական իրավասության ներքո և չպետք է ունենա միջանցքի տրամաբանություն:

Դեռ նախորդ տարի Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել էր, որ «Զանգեզուրի միջանցքի» հարցով խնդիրը Հայաստանի հետ չէ, այլ՝ Իրանի: **«Ինչ վերաբերում է «Զանգեզուրի միջանցքին», ապա դա Հայաստանի հետ խնդիր չէ: «Զանգեզուրի միջանցքը» Իրանի հետ խնդիր է: Այլ կերպ ասած՝ երկու մուսուլմանական երկրների խնդիր: Այն փաստը, որ Իրանը այդ հարցով այդպիսի դիրքորոշում ունի, վրդովեցնում է և՛ Ադրբեջանին, և՛ մեզ»,**– ասել էր Էրդողանը:

Այդուհանդերձ, նախորդ տարվա հոկտեմբերից Բաքուն տարբեր մակարդակներով սկսեց հայտարարել, որ այլևս հետաքրքրված չէ Հայաստանի տարածքով միջանցքի բացման նախագծով ու պլանավորում է այդ նախագիծն իրականացնել Իրանի տարածքով: **«Այդ երթուղին մեզ համար կորցրել է իր գրավչությունը: Նախագիծը մենք կարող ենք իրականացնել Իրանի հետ»,**– հայտարարել էր Ադրբեջանի նախագահի արտաքին հարաբերությունների հարցերով օգնական Հիքմեթ Հաջիևը:

Նա նշել էր, թե Բաքուն պլաններ չունի ռազմական ճանապարհով գրավելու Սյունիքի մարզը: **«Մեր օրակարգը միայն երկկողմ փոխգործակցության շրջանակներում տրանսպորտային կապերի կառուցումն է: Այս հարցը դեռ քննարկման փուլում է, բայց հայկական կողմից պահանջվելու է ցույց տալ, որ իրենք իսկապես շահագրգռված են դրանում»,**– հայտարարել էր Հաջիևը:

12.12.2024

* * *

Անկարան շարունակում է քննարկումները Բաքվի հետ «Զանգեզուրի միջանցքի» շուրջ, ասել է Թուրքիայի տրանսպորտի նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն:

«Անկարան հավատարիմ է Միջին միջանցքի արդյունավետության բարձրացմանը: Այս ուղղությամբ խոստումնալից նախագծերից մեկը Զանգեզուրի միջանցքն է»,– ասել է Ուրալօղլուն:

Բաքուն պնդում է, որ Ադրբեջանը Նախիջևանի հետ պետք է կապ ունենա Սյունիքի մարզով, բայց առանց մաքսային ու սահմանային հսկողության: Սակայն Երևանը պատրաստ է ճանապարհ տրամադրել Ադրբեջանին՝ առանց Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու սահմանների անխախտելիությունը կասկածի տակ դնելու:

26.12.2024

Փայտահրագրային գեղանկարչության երախտավորը՝ Սերժ Բաղդասարյան

Էությամբ ստեղծագործող մարդն անպայման կիրագործի այն առաքելությունը, որի համար լույս աշխարհ է եկել: Արվեստի նվիրյալները՝ երգիչ, նկարիչ, քանդակագործ, սովորաբար սիրում են հասարակության աչքին երևալ ինքնատիպ կերպարով... Կան արտաքին տեսքի ընդհանուր ուրվագծեր, որ նրանցից ամեն մեկին տարբերում է հասարակության այլ սոցիալական խմբերից, բայց Գորիսից մեր չվերծանված հերոսին ոչ ոք չի ասի, թե նա հայկական փայտարվեստում... նոր ուղղության՝ հրագրային գեղանկարչության հիմնադիրն է... Հիշեցնենք, որ փայտահրագրված գեղանկարը ցանկացած պատկերասրահ զարդարող արվեստի մեծարժեք գործ է...

Սերժ Բաղդասարյանն ութ տարեկանում նկարում և քանդակում էր: 2-րդ դասարանում հանրապետական մրցույթի հաղթող ճանաչվեց: Դպրոցում նկարների տակ ստորագրեց «Սերժ» ու բոլորին ստիպեց իրեն ճանաչել...

Աճառյանի «փայտակերտ»-ն ու ընկերոջս հայտնաբերած «հրագրում»-ը

Երևակայության արդյունքում մտքի թռիչքով նկարին իմաստալից ձև ու բովանդակություն տալ, արվեստագետի կոշտացած ձեռքերով ամիսներ ու տարիներ շարունակ չոր փայտանյութի հետ անհաշտ պայքար մղել, հատուկ գործիքով փայտե ֆաներան վառելու միջոցով դիմանկար, բնանկար, նատյուրմորտ ստեղծել, որոնք ասես թվային ֆոտոապարատով նկարված լուսանկարներ լինեն... Գեղանկարչության թեմային անդրադառնալիս երկմտանքի մեջ էի՝ Սերժ Բաղդասարյանի ստեղծածն արվեստի ո՞ր ճյուղին է պատկանում: Մասնագետները չեն թաքցնում իրենց հիացմունքը Սերժ Բաղդասարյանի արվեստի հանդեպ, բայց խոստովանում են՝ իրենք նույնպես չգիտեն, թե փայտարվեստի այս ճյուղին ի՞նչ անվանում տալ: Սերժը հարցազրույցում իր ստեղծագործությունները ներկայացնում է որպես գեղանկար՝ փայտի վրա արված կամ պարզապես նկար.

– Սա իմ ինքնանկարն է, սա՝ «Հայ հին և միջնադարյան ճարտարապետությունը» գրքից իմ ընտրած հայկական զարդանախշերով նատյուրմորտ, սա՝ Սատանի կամրջից դեպի Որոտանի կիրճը նայող պեյզաժ է:

– Չէ՞ որ դրանք մատիտով, ջրաներկով կամ յուղաներկով նկարված աշխատանքների անվանումներ են: Ձեզ համար տարօրինակ չի՞ հնչում՝ «փայտը վառելու միջոցով արված գեղանկար»:

– Հայաստանում փայտարվեստի իմ ուղղությանը համապատասխանող բառ չկա: 2007թ. Գորիսի և Երևանի ցուցահանդեսներիս ժամանակ արվեստս ներկայացնելու համար դա իսկական գլուխկոտրուկ էր: Նկարիչների, արվեստի տեսաբանների հետ համատեղ իմ ստեղծագործությունների համար ամենահարմար բառն ընտրվեց՝ «Փայտադրվագում», որն ավելի շատ փոխառված է ռուսերեն «Резьба по дереву»-ից:

Հոդվածը գրելուց առաջ որոնումներ կատարեցի՝ գտնելու, իմանալու համար, թե ինչպե՞ս է կոչվում փայտը վառելու միջոցով գեղարվեստական պատկեր նկարելու արվեստը:

Սերժ Բաղդասարյանի փայտահրագրային արվեստը նոր երևույթ է

Սերժն իր արվեստի՝ նոր երևույթ լինելու հանգամանքը հիմնավորում է փաստերով: 2007 թվականին քույրը՝ Սուսաննան, Երևանում իր մոտ ուներ Սերժի փայտահրագրած Տաթևի վանքի փոքր նկարը: Առանց եղբոր իմացության, այդ նկարով ներկայացավ ՀՀ ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն, լուսահոգի Սարո Սարուխանյանին: Պատմեց Սերժի մասին և ցույց տվեց նրա ստեղծագործությունը: Արվեստաբանը կարծես տեսածին չհավատաց.

– Սա ի՞նչ ստեղծագործություն է:

– Էլեկտրական հատուկ գործիքով՝ ֆաներան վառելու միջոցով, կատարված հազար ու մի երանգով միագույն հիասքանչ գեղանկար, - առանց փայտահրագրման արվեստի մասին որևէ բան իմանալու, պատասխանեց Սուսաննան:

– Առաջին անգամ եմ տեսնում նման գործ...

Հայաստանի գեղարվեստի ակադեմիայի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի դասախոսներն ու մասնագետները, Հայաստանի նկարիչներն ու արվեստագետներն այն կարծիքին են, որ Գորիսից փայտահրագրող Սերժ Բաղդասարյանը տիրապետում է արվեստի այնպիսի ուրույն ոճի, որն արվեստի աշխարհում շատ քիչ է ուսումնասիրված:

Կյանքի ճանապարհն՝ ինքնուրույն...

Ստեղծագործական նախասիրություն, ջիղ, շնորհ, տաղանդ... Թեև գիտականորեն ապացուցված չէ, որ շնորհալի մարդու նախնիներն անպայման պետք է շնորհալի լինեն, բայց մեր հերոսի պարագայում՝ նրա ազգականների մեջ արվեստասերների առկայությունը, անշուշտ, իր կնիքն է թողել: Սերժ Բաղդասարյանը Գորիսում ճանաչված արվեստագետ է, սակայն իր համեստության պատճառով քչերը գիտեն, որ նա Հայաստանում փայտահրագրային գեղանկարչության հիմնադիրն է: Շատերը նրան ճանաչում են որպես շինարարաշխղեկ, ում ջանքերով 1970-80-ականներին մեծ թափով ընթացան Գորիսի շրջանի մի քանի գյուղեր շրջկենտրոն Գորիսին կապող ճանապարհների կառուցման ու ասֆալտապատման աշխատանքները:

Սերժ Ազատի Բաղդասարյանը ծնվել է 1950 թ. Գորիսում: Մանկուց օժտված էր նկարելու բնատուր շնորհով, որի աստվածային պարգևին նպաստել են նաև ազգակցական կապերն ու միջավայրը:

Սերժ Բաղդասարյանը սովորել է Գորիսի Ակսել Բակունցի անվան N 1 դպրոցում: Առաջին դասարանում նկարում էր գծանկար-դիմանկար, գունավոր մատիտներով՝ բնանկար: Պլաստիլինե մի քանի տուփի պարունակությունն իրար խառնելով՝ քանդակում էր Հայկ Նահապետին, Սասունցի Դավթին: 2-րդ դասարանում աշխատանքները ցուցադրվում էին դպրոցում: Սերժը մտովի տեղափոխվում է դպրոցական ստեղծագործական տարիներ...

– Դպրոցի միջանցքում մանկական անկյուն կար՝ շնորհալի դպրոցականների ցուցավահանակներ, ցուցասեղաններ: Մինչև 10-րդ դասարանն իմ 100-ից ավելի գործեր տեղ էին գտել այդ վահանակներում, ցուցասեղաններում: Դրանք մատիտով, ջրաներկով, յուղաներկով արված դիմանկարներ, բնանկարներ էին ու մի քանի քանդակ:

Դպրոցն ինձ համար ոչ միայն կրթության ու դաստիարակության վայր էր, այլ ստեղծագործական դարբնոց: Արդեն կրտսեր տարիքում մատիտով, ջրաներկով բազմաթիվ նկարներ ունեի: Դպրոցում իմ սովորելու տարիները համընկան մեր դպրոցի դիմացի այգում մեծ հարթաքանդակ-հուշարձանի կառուցման աշխատանքներին, որը տևեց մոտ մեկ տարի: Դա բարեբախտություն էր, քանզի այն ամբողջապես փոխեց իմ կյանքը: 9 տարեկանում առաջին անգամ տեսա ճարտարապետ, քանդակագործ, հուշարձան պատրաստող վարպետներ: Դասերից հետո վազում էի նրանց մոտ, մինչև մութն ընկնելը կլանված նայում, թե ինչպե՞ս են գիպսե հսկա կաղապարներից հանվում աշխատավորների ու զինվորների կերպարանքով կաղապարները, հետո դրանք ոսկերչական ճշգրտությամբ փոխանցվում նախապես կառուցված բազալտե պատի վրա: Նրանք գիպսի ու բազալտի հետ աշխատում էին, ես նայում էի: Զգացի, որ ինչ-որ բան կարծես ձգում է՝ դա քանդակագործության հանդեպ սերն էր, որը ներարկեցին այդ մարդիկ: Ափսոս, չեմ հարցրել, թե ովքե՞ր են հուշարձանը պատրաստող վարպետները: Զբոսայգու հուշարձան-հարթաքանդակի շրջակայքում ընկած թրծած գիպսե կաղապարների մնացորդներ, մեծ կտորներ կային: Դրանք լցնում էի պայուսակիս մեջ, տանում տուն: Դրանցից 20 x 40 սմ չափսի սալիկներ էի կտրում, մատիտով էսքիզներ անում և ըստ այդ պատկերի՝ շաղափով, պտուտակահանով, դանակով, փոքր հատիչով կամ տանն առկա այլ պարզունակ գործիքներով գիպսի վրա փորագրելով, հարթաքանդակներ էի ստեղծում: Իմ կատարած աշխատանքների մասին ոչ մեկին չէի ասում: Ուրիշներից կարծիք չէի հարցնում: Ինքս տեսնում էի իմ ավարտած հարթաքանդակները: Մտածեցի՝ եթե օտարի աչքերով նայելով հավանեցի, ուրեմն քանդակ էլ կստացվի: Ու սկսեցի գիպսից կիսանդրի քանդակել: Տեսա, որ դա էլ հաջողվեց: Ամեն ինչ սպասվածից ավելի արագ եղավ: Հետաքրքիր զուգադիպությամբ, այդ օրերին դպրոցականների միջև անց էր կացվում 7-12 տարեկան ստեղծագործողների հանրապետական մրցույթ: Ես 2-րդ դասարանում էի: Քանի որ հիմնականում նկարում էի ու պլաստիլինով արձաններ պատրաստում, որոշեցի մրցույթին մասնակցել իմ տարիքի երեխայի համար անսովոր ստեղծագործությամբ՝ քանդակել կիսանդրի, մանավանդ, որ գիպսից քանդակելը նոր էի սովորել ու ինձ ինքնավստահ էի զգում: Մոտ երկու ամիս ժամանակ ունեի: Կոմունիստական գաղափարախոսության տարիներ էին, ուստի որոշեցի այդ մրցույթին ներկայանալ միանգամից երկու քանդակով՝ Լենինի և Ստալինի: Գիտեի, որ տուֆը փխրուն է, բազալտը՝ կարծր, դրանով ավելի դժվար է կիսանդրի քանդակել: Ուզում էի այդ երկու քարատեսակի վրա քանդակել սովորել՝ «Սրանից լավ առիթ չի լինի, պետք է տուֆն ու բազալտը միաժամանակ փորձել»: Նախ տուֆով Լենինի հարթաքանդակը ստեղծեցի: Հավանեցի: Իսկ դա նշանակում էր, որ պետք է հարթաքանդակը փոխեմ կիսանդրու: Բազալտն էլ փորձեցի: Քանդակեցի կյանքումս առաջին լուրջ աշխատանքները՝ Լենինի տուֆե, ապա Ստալինի բազալտե կիսանդրիները: 2-րդ դասարանում առաջին քանդակագործական ստեղծագործություններովս՝ 1962 թ. կայացած այդ մրցույթում հաղթեցի: Նվիրեցին պատվոգիր և Հայաստանի տեսարժան վայրերի մասին գունավոր ատլաս:

Քանդակները մրցույթից հետո մնացին դպրոցում: Դա մեծ լիցք հաղորդեց Սերժին, ով շարունակեց ոգևորված ստեղծագործել: Բոլոր նյութերով նկարներ ուներ, բայց յուղաներկ դեռ չէր փորձել: Անպայման ուզում էր յուղաներկով նկարել: Նա համոզված էր, որ եթե կարողանա ջրաներկով ստանալ բնության ամենանուրբ երևույթները՝ ցող, շաղ, կաթիլ, լույսի շող, մթության մեջ՝ պատկեր, ապա յուղաներկով նկարելն անհամեմատ հեշտ կլինի: Անընդհատ ինքնակատարելագործվում էր:

Ապագան կանխորոշող պատահար

1963 թ. օգոստոսի 24-ին Սերժը 7-րդ դասարանում էր, երբ ամառային արձակուրդի օրերին՝ բակում խաղալիս, նրա

↘

Հետո դժբախտ դեպք պատահեց: Կյանքին վտանգ սպառնաց՝ ձեռքի մկանային հյուսվածքները լրջորեն վնասվեցին: Շտապ տեղափոխեցին Երևան: Ծնողներն ամեն ինչ արեցին, որ Սերժը հաշմանդամ չդառնա: Նրան՝ բարեհաջող վիրահատվելուց հետո, վերականգնողական նպատակով մոտ մեկ տարի պահեցին Երևանի Արաբկիրի շրջանի մանկական 5-րդ հիվանդանոցում: Թեև այդ միջադեպը Սերժի ողջ հետագա կյանքի վրա իր բացասական կնիքը թողեց (այսօր էլ առողջական խնդիր ունի), բայց բժիշկներին հաջողվեց նրա ձեռքը դարձնել շարժունակ: Սերժը հիվանդանոցում էլ սկսեց ստեղծագործել.

– Վիրահատության ժամանակ բոլորն իմ հանդեպ հատուկ վերաբերմունք էին ցուցաբերում: Պետք էր «վարձահատույց» լինել նրանց: Այնտեղ էլ էի ստեղծագործում: Նկարում էի ու քանդակում: Դրանից հետո ավելի ջերմ վերաբերվեցին: Քանդակեցի «Մկների ժողովը»: Որպեսզի բուժանձնակազմն իմանա իմ արվեստագիտական նախասիրությունների ու ստեղծագործական մտահորիզոնի մասին, քանդակեցի «Սայաթ-Նովա»: Հիվանդանոցի պատերը ողողված էին իմ նկարներով. «Հավաքարար», «Բուժքույր», «Ինձ բուժող բժիշկը», ինչպես նաև բնանկարներ, նատյուրմորտներ:

Որպես «շնորհալի հիվանդ», շաբաթական մի քանի անգամ, բացառության կարգով, թույլատրում էին մի քանի ժամով բացակայել հիվանդանոցից: Գնում էի բարեկամներիս տուն, քայլում Երևանի փողոցներով, այգիներում՝ նստարանին նստած, էսքիզներ էի անում, հետո հիվանդանոցում դրանց հիման վրա ջրաներկով նկարներ նկարում: Նկարներս ու քանդակներս ցուցադրվեցին մանկական բաժնի հատուկ ցուցասրահում, իսկ Գորիս վերադառնալուց հետո դրանք մնացին այնտեղ: Հարազատ դպրոցի հետ կապ էի պահպանում: Մեկ տարի չսովորեցի, բայց տնօրենությունը, հաշվի առնելով իմ՝ հրաշքով ողջ մնալը, ինձ փոխադրեց հաջորդ դասարան: Երևանից վերադառնալուց առաջ մնում էր իրագործել վաղեմի երազանքս: Գիտեի, որ «Հազար ու մի մանրուք» խանութում վաճառում են յուղաներկի համար անհրաժեշտ բոլոր պարագաները՝ կտավ, ներկեր, վրձիններ… Ագահորեն ամեն ինչ վերցրի, եկա Գորիս: Մի քանի օր ջրաներկով ու յուղաներկով բազմաթիվ փորձեր արեցի, որպեսզի կարողանամ յուղաներկով ճշգրտորեն ներկայացնել իրի թափանցիկությունը, փայլն ու ստվերը: Նոր ուսումնական տարվան ներկայացա մի քանի նոր նկարով: Ինձ առողջ տեսնելն ու արդեն յուղաներկով դպրոցի ցուցասրահները համալրելը բոլորի համար կրկնակի ուրախություն էր…

Դպրոցի բոլոր միջոցառումների հարդարման, ձևավորման, դեկորացիաների պատրաստման ու տեղադրման աշխատանքները նույնպես Սերժինն էին:

1967 թ. դպրոցն ավարտելուց հետո որոշեց դառնալ ավտոճանապարհաշինարար: Նույն տարում դպրոցի միջնակարգ և ութամյա կրթության վկայականների հիման վրա միաժամանակ քննություններ հանձնեց՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոճանապարհաշինարարական բաժին և Երևանի նույնանուն տեխնիկում ընդունվելու համար: Ինստիտուտի մրցույթից դուրս մնաց, բայց գերազանց գնահատականներով ընդունվեց տեխնիկում: Երևան մեկնելուց առաջ իր ողջ տարիների ստեղծած քանդակներն ու 100-ից ավելի գծանկար, ջրաներկով ու յուղաներկով աշխատանքները խնամքով տեղավորեց տան կտուրում, դասավորեց մի մեծ արկղի մեջ, պինդ փակեց՝ հուսով, որ ուսումն ավարտելուց հետո այն նորից կբացի…

Հինգ տարի շարունակ Սերժը համատեղեց ուսումը, աշխողեկությունն ու ստեղծագործական աշխատանքը:

– Ապրում էի հանրակացարանում, նկարում և քանդակում էի: Հանրակացարանում և տեխնիկումում բոլորը գիտեին, որ նկարիչ-քանդակագործ եմ: Ուսումնաարտադրական պրակտիկայի ժամանակ, 70-ականների վերջին մեկ ամիս աշխողեկ աշխատեցի «Հրազդան» մարզադաշտի շինարարությունում, որտեղ միայն առաջին շարքի նստարաններն էին պատրաստ: Այնուհետև պրակտիկաս վեց ամիս Երևան-Սևան մայրուղու շինարարության վրա էր: Ճանապարհի կառուցումը նոր էր սկսվել: Մեզ հետ գերմանացի մասնագետներ էին աշխատում: Ազատ ժամանակս այցելում էի Երևանի մանկական այգի, ուր շախմատասերները խմբված՝ հետևում էին օրվա հայտնի







շախմատ խաղացողներին: Ես արդեն գիտեի նրանց խաղերի օրերը: Մեծ թղթապանակ ունեի: Վերցնում էի մատիտս ու թուղթս, նրանց կողքին իբր հետևում էի շախմատի խաղին, բայց թաքուն նկարում էի շախմատիստներին: Ես էլ էի խաղում: Նրանք խաղալիս չգիտեին, որ էսքիզ եմ անում: Հետո հանրակացարանում յուղաներկով նրանց դիմանկարներն էի նկարում, տանում, նրանց ցույց էի տալիս: Հիանում էին, գովասանքի խոսքեր ասում և խաղալու հերթը հանձնում ինձ… Տեխնիկումում ստեղծեցի մոտ 50 բնանկար և նատյուրմորտ՝ գծանկար, յուղաներկ աշխատանք: Նկարների մի մասը նվիրեցի դասախոսներիս, ընկերներիս, մի մասը մնաց հանրակացարանի և տեխնիկումի միջանցքներում գեղեցիկ շրջանակներում փակցված…

Տեխնիկումն ավարտելուց հետո՝ մոտ մեկ տարի աշխատեց Հայաստանի պլանանախագծային պետական բյուրոյում: Սերժն այնտեղ միակ պլանավորողը, նախագծողը, կոնստրուկտորը, մակետ պատրաստողը, նկարիչն ու քանդակագործն էր, որ չուներ բարձրագույն կրթություն: 1972 թ. տեղափոխվեց Գորիս: Տեղ հասնելուն պես՝ հենց առաջին օրը, վազեց տան կտուր, որպեսզի տեսնի՝ հինգ տարի առաջ արկղում պահվող նկարները հո չե՞ն վնասվել… Վերհիշում է Սերժը.

– Մոտ 40 դիմանկար, 60 բնանկար էի թողել: Դա նույնքան էր, որքան ստեղծագործել եմ հետագա բոլոր տարիների ընթացքում: Աչքերիս չէի հավատում: Արկղը դատարկ, այս ու այն կողմ ընկած հատուկենտ պատառոտված թղթի կտորտանքներ, վառված նկարներիս մոխրացած հետքեր… Ապշել էի: Դա մեծ ցավ պատճառեց ինձ: Ինչպես հետո պարզվեց, «ավերածությունների» հեղինակները եղբորս չարաճճի երեխաներն ու նրանց ընկերներն էին:

Սերժը 37 տարի աշխատեց Գորիսի ճանշինտեղամասի աշխողեկ:

17 տարվա ստեղծագործական ընդմիջումից հետո՝ 1988-ին, կրկին սկսեց նկարել.

– Արձակուրդում էի: Մտածեցի՝ «տեսնես կարո՞ղ եմ նորից նկարել»: Հայելու օգնությամբ ինքնանկար-գծանկար նկարեցի: Ապա նկարեցի տիկնոջս: Տեսա, որ ստացվում է: Զգացի, որ կարող եմ շարունակել նկարել: 1988-ի ձմռանը տեխնիկումի մի ուսանողի մոտ առաջին անգամ պատահաբար տեսա փայտ վառող էլեկտրական գործիք: Հարցրի՝ կվաճառե՞ս: Ասաց՝ այո: Գնեցի: Որոշեցի փորձել ֆաներան վառելով նկարել: Գիշերուզօր աշխատում էի, որ նույն պարզությամբ թղթի վրա նկարած էսքիզներիս պատկերները ստանամ փայտի վրա: 1988-ից մինչև 1990 թվականները բազմաթիվ սիրողական հրագրային գեղանկարչության նմուշներ ստեղծեցի՝ եղնիկի գլուխ, Մասիս սար, Սթիվենսոնի «Գանձերի կղզին» գրքի տպավորությամբ՝ ծովահեններ… Մտքիս մեջ արդեն մեծ-մեծ գործեր էի պատկերացնում… Այդ ժամանակ մեծ թափով ընթանում էին Տաթևի վանքի վերանորոգման աշխատանքները: Այնտեղ աշխատող ընկերոջս օգնում էի տեխնիկայով, սարքավորումներով: 1990-97 թթ. Տաթևում աշխատելիս միշտ նկարչական ալբոմը ձեռքիս էր, տեղում էսքիզներ էի անում, հետո ֆաներայի վրա փայտահրագրում: Երբ զգացի, որ եկել է ժամանակը, որպեսզի մի մեծածավալ լուրջ կտավ ստեղծեմ, ձեռնամուխ եղա «Տաթև» նկարիս ստեղծմանը: Այն պլաստիկատի վրա է: Քանի որ այն առաջին գործս էր, չափերով մեծ էր, պլաստիկատն իմ փայտահրագրման արվեստում նոր նյութ էր, պատասխանատվությամբ էի մոտենում աշխատանքիս: Այն տևեց երեք տարի՝ ընդմիջումներով: Նկարի վրա աշխատեցի 1 տարի 7 ամիս: Ավարտեցի 1993-ի դեկտեմբերին: Այդ ընթացքում՝ իմ արվեստի հետ կապված, ընդամենը մեկ մշակութային միջոցառման եմ մասնակցել: Տաթև գյուղի դպրոցի հիմնադրման 150-ամյակին դպրոցի դահլիճում մեծ միջոցառման էին նախապատրաստվում: Աշխարհի տարբեր վայրերից հրավիրվածներ կային: Հարյուրավոր մարդիկ էին մասնակցում այդ տոնախմբությանը: Հայաստանի նկարիչների միության անդամներն իրենց նկարներն էին փակցնում դահլիճում: Ես ներկայացա փայտը վառելու միջոցով արված միակ «Տաթև» ստեղծագործությամբ: Մասնակիցները զարմացած ինձ էին նայում: Պարզ հագուկապով, մի քանի ընկերներով զգուշությամբ ներս ենք բերում մեծ նկարը, որ փակցնենք: Շատերը կարծում էին՝ ես օգնական բանվոր եմ, նկարն էլ ինչ-որ նշանավոր նկարչի ստեղծագործություն է, ով ուր որ է, պիտի գա: Զարմացան՝ իմանալով, որ հեղինակը ես եմ:

Միջոցառմանը ներկա բոլոր մարդիկ բարձր կարծիք հայտնեցին նկարի մասին:

2-րդ աշխատանքս Սատանայի կամրջի նկարն է: Աշխատեցի ֆաներայի վրա, ավարտեցի 1994-ի գարնանը: Ապա, ինչպես ասում են, ձեռքերս վարժվեցին ու մինչև 1997 թվականը՝ ամեն տարի 1-2 նկար նկարեցի: «Որոտանի կիրճը», «Մայրամուտը Որոտանի կիրճում», «Կատարի»՝ ինձ համար հարազատ վայր, որովհետև այնտեղ և՛ ճանապարհ եմ կառուցել, և՛ այն պաշտպանել թշնամուց, և՛ պատերազմի թոհուբոհին այդ ռազմավարական ճանապարհը ձյունից մաքրել, և՛ սնունդ հասցրել մեր մարտիկներին: Առաջին անգամ, երբ Կատարիի մեր դիրքը տեսա, ինձ հրաշք թվաց: Այդ պահին իսկույն էսքիզ արեցի: Այդ պիսի մի պահի ծնունդ է նաև հաջորդ նկարս՝ «Արևելքը շառագունեց Կատարիում»:

Թղթապանակը միշտ թևիս տակ էր, ներսում՝ գունավոր կավճամատիտներ, մատիտներ ու ռետինը: Գեղեցիկ տեսարան նկատեցի, ամեն գործ թողնում, հիվանդագին տեղից թռչում, դիրք ընդունում, իսկույն էսքիզ էի անում: Բոլոր էսքիզներս մինչև հիմա պահպանվում են…

Ազատամարտ…

Սումգայիթի դեպքերի ժամանակ Սերժը դեռ Գորիս-Տաթև ճանապարհի աշխողեկն էր: Կարճ ժամանակում ամեն ինչ փոխվեց: 1989-ից մինչև 1992 թվականները միաժամանակ և՛ ազատամարտիկ էր, և՛ շինարար.

– Գորիսում զգացվում էր պատերազմի շունչը: Ադրբեջանցիները հարձակվում էին սահմանամերձ գյուղերի վրա, հովիվներ սպանում, հոտեր առևանգում… Մեր թաղամասում 1988-ի մայիսին ստեղծվեց «Քոլատակ» ջոկատը, որը մեծ վաստակ ունի Գորիսի սահմանների պաշտպանության գործում: Մեկ տարի անց՝ 1989-ի աշնանը, նախկին 11 հոգանոց ջոկատը համալրվեց թաղամասի բոլոր տղամարդկանցով՝ արդեն 240 կամավորական կար: Հրամանատարը փոքր եղբայրս էր՝ Սուրիկ Բաղդասարյանը: Ընդգրկվեցի ջոկատի կազմում: Երդվեցինք Մխիթար Սպարապետի գերեզմանի մոտ…

Ծովափնյա հանգիստն ու ստեղծագործական անհանգստությունը…

– Մինչև 1999 թ. աշխատում էի Տաթևի ճանապարհի վրա: 1997թ. արձակուրդին Գորիսի հայտնի հեռուստաօպերատոր Ռուդիկ Խոջաբաղյանի հետ մեկնեցի Բաթումի: Նպատակս՝ հանգստանալուց բացի, փայտահրագրման համար տեսանկարահանում կատարելն էր: Այն ժամանակ ֆոտոապարատ կամ բջջային հեռախոս չկար: Մտածեցի՝ ավելի հեշտ է տեսանկարահանել, «ստոպ-կադր» տալ, ապա այդ կադրն էսքիզ անել, փայտահրագրել: Ես որսում էի տեսարժան վայրը, Ռուդիկը նկարում էր: Նախապես տեղյակ էի, որ Վրաստանի հայաշատ շրջաններում շատ տեսարժան վայրեր կան: Փայտահրագրումով նկարելու համար 20 վայրում տեսանկարահանումներ կատարեցինք: Վերադառնալուց հետո այդ 20-ից կանգ առա առավել լավ չորս նկարի վրա…

Առաջին նկարս այսպես ծնվեց: Ախալցխայում մեր հայրենակիցները մեզ հյուր ընդունեցին: Նրանք պատմեցին տեղի նշանավոր հայկական եկեղեցու մասին, որը վրացիները ցանկացել էին խլել հայերից: Վազգեն առաջինի ջանքերով դա կասեցվել է և եկեղեցին կրկին հայկական է մնացել: Գնացինք եկեղե-

Շարունակությունը՝ էջ 12

Փայտահրագրային գեղանկարչության երախտավորը՝ Սերժ Բաղդասարյան

Սկիզբը՝ էջ 11

ցի: Ռուդիկը տեսանկարահանեց: Եկա, այդ եկեղեցին նկարեցի:

Երկրորդ նկարը ծնվեց ճանապարհին, երբ հանդիպեցինք վարուցանք անողների: Կարծես հին նահապետական պատկեր տեսնեի՝ վրացի գյուղացիները ձեռքի աշխատանքով՝ գութանով, փայտե արորով վար էին անում:

Երրորդ նկարս՝ «Թմբկա բերդը». Բաթումիից վերադառնալիս Ախալքալաքի մոտ մի հայ տղա մեզ ասաց, որ Ախալքալաքից ուղիղ գծով 14 կմ արևմուտք և պատմական Թմոք գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կուր գետի ձախ ափին վեր խոյացող լեռան գագաթին պահպանվում են Թմկա բերդի ավերակները:

Բերդը տեսա, հրաշք էր... Ժայռատիպ բլուր էր, պաշտպանական բերդը՝ գագաթին: Ներքևից նայելիս՝ մոտ 300 մ բարձրություն ուներ: Շրջակայքը սիրուն էր: Ներքևում գյուղամիջյան փոքրիկ ճանապարհ էր: Կային ուռենիներ, բարդիներ: Մենք չբարձրացանք բերդը, որովհետև խիտ ամպեր էին մոտենում, եղանակն անձրևային էր, պետք էր արագ գործել: Նկարեցի այդ պահը: Քամին հովհարաձև տարածել էր ամպերը: Ես դա արտացոլել եմ նկարում. թվում է՝ ուր որ է, հիմա անձրև պիտի գա...

Չորրորդ նկարս Ախալքալաքի հայկական եկեղեցին է: Ուզում էի հայկական եկեղեցին նկարել, ասացին՝ Ախալքալաքի հայկական եկեղեցու տարածքում ռուսական բազա է: Հայկական եկեղեցին նկարելու համար պետք է ռուսական բանակի հրամանատարությունից թույլտվություն ունենայինք: Թույլտվություն վերցրինք, նկարեցինք:

Այդ ժամանակ նկարում և փորագրում էի: Ինչ նկարել եմ, այդ նկարին համապատասխան, իմ ձեռքերով ընկույզի փայտի միջուկից յուրահատուկ շրջանակներ եմ պատրաստել ու ամեն մեկը՝ յուրովի փայտափորագրել: Օրինակ, «Տաթև» նկարիս շրջանակը փորագրեցի հայկական այբուբենի բոլոր տառերով, քանի որ Տաթևը հայտնի է իր միջնադարյան համալսարանով: Տառատեսակն ընտրեցի «Էջմիածնի գանձերը» գրքից: Ես հարուստ գրականություն ունեմ, որ գնել եմ Վերնիսաժից: Սփյուռքում հրատարակված «Ջուղայի խաչքարերը» բացառիկ գիրքը, «Հայ ճարտարապետություն՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը»՝ երեք հատոր, «Արցախի ճարտարապետություն՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը»...

1999-2007-ը զբաղված էի արվեստով. ութ տարի, ամեն օր նկարում և քանդակում էի: Այդ ժամանակ մոտ 15 գործ ունեի:

2007 թ. «Նարեկացի» արվեստի միությունից Երևանում իմ ստեղծագործական աշխատանքների անհատական ցուցահանդես բացելու իրավեր ստացա: Իմ նախաձեռնությամբ այն նախ կայացավ Գորիսում՝ 2007-ի օգոստոսին: 57 տարեկանում առաջին անգամ հայրենի ծննդավայրում բացվեց ցուցահանդես: Գորիսի պատկերասրահում ցուցադրվեց 20 նկար, 5 քանդակ: Ցուցահանդեսը մեծ հաջողություն ունեցավ: Ժողովրդի համար «Փայտահրագրային գեղանկարչություն»-ը նորություն էր:

Օգոստոսի վերջին տասնօրյակին ցուցահանդես Երևանում էր: Հանդիսավոր բացումը կատարեց Ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն, Արցախյան ազատամարտի մասնակից, լուսահոգի Սարո Սարուխանյանը: Ներկա էին Հայաստանի նշանավոր նկարիչներն ու արվեստագետները, ներկայացուցիչներ Գեղարվեստի ակադեմիայից, Մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնից, Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջից, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից... Ներկայացված էր 25 աշխատանք՝ 20 նկար, 5 քանդակ: Հարյուրավոր այցելուներ իրենց տպավորությունները թողեցին հուշագրքում: Յոթ հեռուստաընկերություն ռեպորտաժ պատրաստեց: Արվեստագետները հիացած էին: Նրանք չէին տեսել այսպիսի արվեստ:

Հայաստանում արվեստի այս ճյուղը տարածելու նպատակով հենց ցուցահանդեսի ընթացքում ամբիոն և դասարան բացելու, դասավանդելու առաջարկներ ստացա Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջից և «Վարպետաց դպրոց» կրթության կենտրոնից: Համաձայնեցի: Սակայն դեպքերն ու իրադարձություններն այնպես զարգացան, որ ընտանիքով Երևան տեղափոխվել չստացվեց:





Սերժը մի պահ լռում է, խոր հոգոց հանում, տան պատշգամբի բազմոցից աչքերն ուղղում հեռուն.

– Ինձ համար անգին է Գնել որդուս նկարն Ազոյի աղբյուրի մոտ: Այստեղ նա 12 տարեկան է: Նա մահացավ դժբախտ պատահարից՝ 2010 թվականին, Ռուսաստանում: Նկարում փայտահրագրել եմ տղայիս, ձեռքը պահած՝ հոսող ջրի վրա: Փայտի վրա ջրի ցայտերն այնպես վառ են երևում, ասես հավերժության գիրկն անցած որդիս ու աղբյուրից հոսող սառնորակ ջուրը երկխոսում են իրար հետ...

... 2023թ. օգոստոսի 10-ից 20-ը Երևանի նկարիչների միությունում պետք է բացվեր հերթական ցուցահանդես: Համապատասխան փաստաթղթերը ձևակերպելուց և պայմանագիրը կնքելուց հետո նկարներս Երևան տեղափոխելու նպատակով վերադարձա Գորիս: Կինս՝ Ծովիկը, ծանր հիվանդացավ: Այդ վիճակից հանելու համար հիվանդանոցում նրա կողքին էի: Ապաքինումը երկար տևեց: Ցուցահանդեսի կազմակերպիչներին նախապես տեղեկացնելուց հետո՝ այն չկայացավ: Երեք ամիս անց Գորիսի պատկերասրահում բացվեց նկարներիս ցուցահանդեսը: Այն պետք է տևեր 10 օր՝ դեկտեմբերի 10-ից մինչև 16-ը, բայց մնաց մինչև դեկտեմբերի վերջը: Պատճառը ոչ միայն արվեստասեր քաղաքացիների հետաքրքրասիրությունն էր իմ արվեստի նկատմամբ, այլև այն, որ ցուցահանդեսի ընթացքում... տեսողությունս կորցրեցի: Հենց պատկերասրահում մի պահ նկատեցի, որ ոչինչ չեմ տեսնում: Կարծեցի՝ կուրացա: Բժիշկները «կատարակտ» ախտորոշմամբ գործուղեցին Երևան: Աչքի վիրահատությունս հաջող անցավ: Մի քանի օրից վերադարձա Գորիս:

Ինձ հետաքրքրողը նաև «բիզնես-արվեստ» հասկացության հանդեպ արվեստագետի կարծիքն է.

– Փայտահրագրած գեղանկարներիցս մի քանիսը վաճառել էի, շատերի կարծիքով՝ բավականին ցածր գնով: Մի շարք բարձրարժեք գործեր գնել են հայեր և օտարերկրացիներ: Գնորդներն անհատական կոլեկցիոներներ են, գեղարվեստի հարգն իմացող մարդիկ կամ պարզապես յուրահատուկ նվերի համար այցելողներ: Փայտահրագրված գեղանկարներիցս ներկայումս կան ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Ռուսաստանում, Հայաստանում:

Ամեն նկար վաճառելուց հետո երկար ժամանակ ուշքի չեմ գալիս: Վաճառած նկարներիցս փորձեցի կրկնօրինակել «Տաթև»-ը: Զգում եմ, որ կրկնօրինակն այն չէ, առաջվանն անգերազանցելի է: Դա վաճառված նկարներիս կրկնօրինակման միակ դեպքն է: Ինձ համար բացառիկ արժեք հանդիսացող նկարներս պահում եմ երբևէ չվաճառելու որոշումով:

Սերժի մեջ եռանդն անսպառ է, նա ամեն օր փայտահրագրմամբ գեղանկարներ է ստեղծում: Նոր է ավարտել «Էջմիածնի Մայր տաճարը», որի վրա աշխատել է չորս տարի, որից վեց ամսում շրջանակն է փայտափորագրել: Առաջիկա նպատակը Նկարիչների միությունում ցուցահանդես կազմակերպելն է...

Սերժի փայտահրագրման աշխատանքներն ամփոփոփելիս պարզվեց, որ այսօր նրա 50 ստեղծագործության մեջ հիմնականում վանքեր են ու եկեղեցիներ, բնություն տեսարժան վայրեր, աշխատավոր մարդիկ:

Վերջում Սերժն իր արվեստի գաղտնիքներն է փոխանցում:

– Դա տեխնիկայի գործ է: Փայտի վրա դժվար է այնքանով, որ եթե վառվող գործիքն ամուր սեղմես՝ այն կվառվի, հանգիստ պահես՝ ստվերի պատկեր չի ստեղծվի: Ինձ համար ամենակարևորը լույս-ստվերի խաղն է, դրանց միջոցով են իմ նկարները կենդանություն ստանում: Չէ՞ որ միայն մեկ գույն ունեմ՝ դա լավ մշակված բաց գույնի փայտանյութի վրա վառելու միջոցով առաջացած դեղնա-դարչնագույնն է՝ իմ կողմից հայտնաբերված հազար ու մի երանգավորումներով: Արդյունքում ստացվում է տպավորիչ գեղանկար: «Ժայռը ստվերի մեջ». թեև ողջ նկարը ստվերի մեջ է, քարանձավն էլ է պարզ երևում, մութ քարանձավի ներսն էլ նշմարվում է այնպես, ինչպես կտեսնես բնականում: Միայն թե այստեղ երկու գույնի խաղ է, բայց այնպես է, որ դու չես զգում միօրինակություն: Թվում է՝ կանգնած դիտում ես նկարում պատկերված նկարը հենց այն վայրից, որտեղից նկարել եմ: Դա բարդ պրոցես է: Պետք է աստիճանաբար երանգները մեղմել կամ խստացնել: Ստվերը մութ է, բայց թափանցիկ: Նայում ես ստվերին, ստվերի տակ գրված է որևէ տառ: Դա տեսնում ես, բայց ստվերը կարծես ծածկել է այն...

Արվեստաբաններից մեկն ասաց՝ «Հազվագյուտ ստեղծագործողների է հաջողվում 100 տոկոսով տիրապետել ստվերի թափանցիկությունը նկարելու վարպետությանը: Դու դա կարողացել ես...»:

Դա տաժանակիր աշխատանքի արդյունք է, զգալով եմ նկարում...

ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 10.01.2025թ.: